

ՋԱՐԻԿ ԱՂԱՋԱՆՅԱՆ

**ԽՈՍՔԻՄԱՍԱՅԻՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐՆ
ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ
(ՈՒՍՈՒՄՆԱՍԵԹՈՂԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ)**

Ե Ր Ե Վ Ա Ն



2016

ՀՏԴ 811.19(07)

ԳՄԴ 81.23Գ7

Ա 458

Հրատարակության են երաշխավորել
ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնը և հայ բանասիրության
ֆակուլտետի գիտական խորհուրդը

ԽՄԲԱԳԻՐ՝

Ռ. Մարգարյան, բ. գ. թ., դոց.

Գրախոսներ՝ Ա. Աղիլխանյան, բ.գ.թ., դոցենտ

Ք. Սուքիասյան, բ.գ.թ., դոցենտ

Աղաջանյան Ջ.

Ա 458 Խոսքիմաստային տեղաշարժերն արդի հայերենում:

Ուսումնամեթոդ. ձեռնարկ/ Ջ. Աղաջանյան.- Եր.: Տիգրան Մեծ, 2016.-

68 էջ:

ՀՏԴ 811.19(07)

ԳՄԴ 81.23Գ7

ISBN 978-99941-0-731-5

© Ձարիկ Աղաջանյան 2016

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

«Խոսքիմասային տեղաշարժերն արդի հայերենում» ուսումնամեթոդական ձեռնարկը կազմված է բուհական և համրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչներին, ծրագրերին համապատասխան. նպատակ ունի նպաստելու նյութին վերաբերող տեսական գիտելիքների հաղորդմանը և գործնական-քերականական ուսուցման համակողմանի ու արդյունավետ անցկացմանը:

Աշխատանքի «Խոսքիմասային տեղաշարժերի և փոխանցումների քննությունը բուհական դասագրքերում» ենթաբաժնում հավաքված են բուհական տարբեր դասագրքերում խոսքիմասային տեղաշարժերին և փոխանցումներին վերաբերող նյութերը, իսկ «Խոսքիմասային տեղաշարժերի և փոխանցումների վերաբերյալ տեսական հարցերը դպրոցական դասագրքերում» ենթաբաժնում՝ դրանցում ընդգրկված ցաքուցրիվ, նաև անվերնագիր (անանուն) տեղեկությունները: Երկու դեպքում էլ մեր աշխատանքն առավելապես տեղեկատվական բնույթ ունի. ոչինչ հավելված չէ, և, կարծում ենք, ոչինչ անտեսված չէ:

Նույն տարբերակմամբ՝ «Թեմայի ուսուցումը բուհում» և «Թեմայի ուսուցումը ժամանակակից դպրոցում» ենթաբաժիններում տրված է թե՛ բուհերի համար նախատեսված գործնական ձեռնարկներում և թե՛ դպրոցական դասագրքերում ընդգրկված վարժությունների, առաջադրանքների գրեթե ամբողջական պատկերը:

Բուհական և դպրոցական ծրագրային պահանջներին համապատասխան՝ քննության նյութ դարձած տեսական գիտելիքների և գործնական քերականական վարժությունների, առաջադրանքների շրջանակներում առաջարկվում են ուսուցման տարբերակային եղանակներ: Ըստ անհրաժեշտության՝ ներկայացված են առաջարկներ ուսումնական (ուսումնատվության և ուսումնառության) գործընթացի կազմակերպման, դասանյութի պլանավորման, կառուցվածքի, ժամանակակից մեթոդների և հնարների օգտագործման, ուսումնական գործունեության տեսակների ընտրության վերաբերյալ:

Ակնկալում ենք՝

- Լեզվական բազմաթիվ «հոգսերի» շարքում չի անտեսվելու բառաշինության գործուն միջոց դարձած քերականական արժեքի երկատման արդյունքում խոսքիմասային տեղաշարժերի օրեցօր աշխուժացումը՝ որպես խոսքիմասային լիակատար կամ մասնակի փոխանցման միտում:

- Ժամանակի ու տրամաբանության թելադրանքով հետևողականորեն կանոնարկվելու են նման բառամիավորների տեղն ու դերը ձևաբանական համակարգում (խոսքը հատկապես դպրոցական դասագրքերի մասին է):

- Կարևորվելու է ծրագրի և դասագրքի, նաև մեթոդիկայի փոխհամապատասխանության խնդիրը՝ ուղղորդվելով «ծրագրային պահանջները ելակետային են» սկզբունքով, միաժամանակ չմոռանալով, որ դասագրքային տվյալները կարող են ծրագրային փոփոխությունների պատճառ դառնալ:

Մեզանում ուսումնամեթոդական նման ձեռնարկ կազմվում է, կարելի է ասել, առաջին անգամ: Բնականաբար այն չի կարող չունենալ թերություններ, հետևաբար սիրով կընդունվի ցանկացած օգտակար և շահեկան դիտողություն:

1. ԽՈՍՔԻՄԱՍԱՅԻՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐՆ ՈՒ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐՆ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Հայոց լեզվի բառային կազմի համալրման դրսևորումներից մեկը **քերականական իմաստաարժեքային կամ խոսքիմասային տեղաշարժն է. այն լեզվաշինության գործուն միջոցներից է:** Բառերի ձևաբանական իմաստի և արժեքի տեղաշարժերի, խոսքիմասային լիակատար և մասնակի փոխանցումների, սրանց հետ կապված՝ միջանկյալ-անցողիկ օղակում հայտնված բառամիավորների կամ տարարժեք բառերի իմաստաքերականական հատկանիշների քննության վերաբերյալ հարցերն առավել համակողմանիորեն ուսումնասիրվում են լեզվի զարգացման արդի փուլում:

Իմաստաարժեքային տեղաշարժը կամ խոսքիմասային փոխանցումը լեզվական բարդ երևույթ է. նրա հիմքում ընկած գործոնների համակարգում որոշիչ դեր ունեն բառի բառիմաստային, ձևաբանական, շարահյուսական հատկանիշներն իրենց բարդ և հետաքրքրական փոխհարաբերություններով, աստիճանական և շղթայական բազմաբնույթ անցումներով: Սրանք տարբեր կողմերով լրացնում են իրար, հանդես են գալիս միասնաբար և սերտորեն կապված են իրար հետ, սակայն այս գործընթացում հավասարաչափ բաշխված չեն, և հաճախ դժվար է որոշակիորեն սահմանազատել դրանցից յուրաքանչյուրի դերն ու նշանակությունը քննարկվող փոխհարաբերության մեջ: Ըստ որում՝ բառի այս կամ այն հատկանիշի կամ այս կամ այն գործոնի առաջնության հարցում էական դեր ունի այն հանգամանքը, թե բառը **որ խոսքի մասից որ խոսքի մասին է անցնում:**

Խոսքիմասային փոխանցման ընթացքում բառն աստիճանաբար ձեռք է բերում խոսքիմասային նոր իմաստ՝ պահպանելով կամ կորցնելով նախկին իմաստը: Ըստ այդմ էլ լինում են՝

ա. խոսքիմասային լիակատար փոխանցումներ.

բ. խոսքիմասային մասնակի փոխանցումներ՝

¹ Հատկապես երկմտությունների, տարակարծությունների պատճառ են դառնում խոսքիմասային մասնակի փոխանցումները, ուստի և այսուհետ խոսքն առավելապես մանատիպ բառերի մասին է:

Բառաշխարհի որևէ բառույթ կամ բառաձև, գործածվելով այլ խոսքի մասի իմաստով ու դերով, առանց ձևային փոփոխությունների, աստիճանաբար ձեռք է բերում մի նոր ընդհանուր իմաստ՝ լիովին ներուճակ լինելով արտահայտելու հին ու նոր ձևաբանական արժեքների բոլոր հատկանիշները, այսինքն՝ հանդես է գալիս երկու (կամ ավելի) խոսքիմասային արժեքների գործառությամբ: Խնդրո առարկայի քննության շրջանակներում կարևորվում են մի կողմից՝ **բազմիմաստության և համանունության** սահմանազատման հարցը, մյուս կողմից՝ **փոխանունություն և խոսքի մասերի փոխակերպում** հասկացությունների տարբերակումը:

«Յուրաքանչյուր խոսքի մաս, անուն թե դերանուն, իր ներքին ստորակարգությամբ և միջխոսքիմասային կապերով, զբաղեցնում է լեզվի կառուցվածքի որոշակի իմաստային դաշտ: Որքան այդ «դաշտերն» ու սրանց հատվածները մերձավոր են, այնքան խոսքիմասային ընդհանրություններն ու անցումները նկատելի են»,² - եզրակացնում է Յ. Բարսեղյանը: Գ. Ջահուկյանը համապատասխան ձևաբանական արժեքներով երկգործառույթ, եռագործառույթ բառերը համարում է գործառական համանուններ, իսկ քերականական այս երևույթը՝ գործառական համանունություն³: Հարցի համակողմանի ուսումնասիրությամբ զբաղվել է Լ. Խաչատրյանը⁴: Նույն հարցերին բազմիցս անդրադարձել է Ա. Հայրապետյանը⁵:

² Յ. Բարսեղյան, Խոսքի մասերի ուսմունքը, Երևան, 1980, էջ 514:

³ Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ 525:

⁴ Տես՝ Լ. Խաչատրյան. 1. Գրաբարի տարարժեք բառերի բացատրական բառարան (բառաքերականական), Ե., 1998: 2. Գրաբարի բացատրական բառարան, ձևաբանորեն տարարժեք բառեր (բնագրային), Ե. 2003: 3. Տեղաշարժեր բառերի ձևաբանական իմաստի մեջ, Երևան, 1985: 4. Խոսքիմասային տարարժեքությունն արդի հայերենի կայուն կապակցություններում, Երևան, 1996:

⁵ Տես՝ Ա. Հայրապետյան. 1. Ածանցավոր ածականների խոսքիմասային փոխանցումները ժամանակակից հայերենում, Երևան, 1991: 2. Կրոնական իմաստով տարարժեք բառերը հայերենի բառապաշարում, Բանբեր Երևանի համալսարանի, 1, 1993: 3. Ածանցավոր ածականների խոսքիմասային փոխանցման հիմունքները, ուղղությունները, տեսակները և հիմքերը, Բանբեր Երևանի համալսարանի, 3, 1988: 4. Արդի հայերենի խոսքիմասային տարարժեք բառերի բառարան, Երևան, 1994: 5. Ոչ գծային բառաստեղծումը հայերենում, Երևան, 2011:

Խոսքիմասային տեղաշարժերի գնահատման հիմքը խոսքն է, բայց և ուսումնասիրության գործընթացում պետք է կարողանալ վերանալ խոսքից և արժևորել այն՝ որպես համալեզվական իրողություն՝ ելնելով խոսքային՝ գործառական յուրահատկություններից, խոսքային հատկանիշից: Չպետք է կարծել, թե տվյալ բառի, ասենք, թե՛ գոյական, թե՛ ածական համարելու հիմունքը ենթակայի ու խնդրի, ինչպես և որոշիչ գործառույթներ կատարելն է. **ուսուցիչ** բառը ևս գործածվում է իբրև որոշիչ, բայց ածական չի դառնում...

Նմանատիպ բառերի ուսումնասիրության խնդրի կարևորությամբ են պայմանավորված դպրոցական-նորմատիվ քերականություններում տեղ գտած կարճառոտ հիշատակումները՝ երբեմն՝ շեշտված, երբեմն՝ իմիջիայլոց, թեական:

Փաստերը ցույց են տալիս, որ բառի խոսքիմասային տեղաշարժերի դեպքում կարևոր է ոչ այնքան բառիմաստի փոփոխության չափը, որքան այդ փոփոխության բնույթը: Այդ պատճառով էլ երբեմն իմաստի համեմատաբար փոքր փոփոխությունը զուգակցվում է խոսքիմասային արժեքի փոփոխությամբ, իսկ ավելի մեծ փոփոխությունները կարող են չհանգեցնել այդպիսի հետևանքի: Հայոց լեզվի զարգացման ընթացքում բոլորովին փոխվել է, օրինակ, **դեղ** գոյականի իմաստը (սկզբնապես նշանակել է «բույս»): Չնայած դրան՝ այն շարունակում է մնալ գոյական: Մինչդեռ **տակ** բառն իր իմաստը համեմատաբար քիչ է փոխել, բայց փոխել է խոսքիմասային պատկանելությունը, համալրել կապերի շարքը. այս դեպքում բառի՝ գոյականից կապի վերածման հարցում որոշակի դեր է կատարել հարաբերության (տարածական) իմաստը, որը եղել է, կա գոյականների մեջ:

Գոյականը կամ նյութական իմաստ ունեցող այլ խոսքի մասի պատկանող բառը աստիճանաբար կարող է վերածվել կապի, եթե բառը հաճախակի է գործածվում բառերի՝ կապին հատուկ ստորադասական հարաբերությունն արտահայտելու դերով, աստիճանաբար ետին պլան են մղվում նրա ունեցած մյուս կիրառությունները, որոնք ժամանակի ընթացքում կարող են զուգահեռաբար գոյություն ունենալ խոսքիմասային նոր արժեքի հետ:

Բառերի՝ շաղկապական արժեք ձեռք բերելը կատարվում է բառերի, նախադասությունների համագոր հարաբերություններ և նախադասությունների ստորադասական հարաբերություններ արտահայտող կիրառությունների հիման վրա: Օր.՝ **այլ, այլապես** բառերն իբրև շաղկապ գործածվելու գործընթացում որոշակի դեր է կատարում այդ բառերի նյութական (առաջինի դերանվանական, երկրորդի մակբայական) իմաստի մեջ եղած ներհակական, հակադրական իմաստը:

Կապերի՝ շաղկապների վերածման հարցում վճռական նշանակություն է ստանում բառի շարահյուսական դերի համապատասխան փոփոխությունը:

Խոսքիմասային փոխանցման հիմքում թեև ընկած է բառային իմաստի նպաստող գործոնը, բայց և այնպես բառային իմաստի փոփոխությունները ինքնին երբեք չեն կարող պատճառ դառնալ բառի՝ որպես խոսքի մասի, իմաստային փոփոխության: Այսպիսի փոփոխություն կարող է առաջանալ միայն քերականական պատճառներով:

Խոսքիմասային տեղաշարժերի գործընթացում հիմնային, էական դեր ունի շարահյուսական հատկանիշը, շարահյուսական գործոնը: Խոսքային, շարահյուսական որոշակի պայմաններում որևէ բառի իմաստաարժեքային երկատույնը կատարվում է նրա մասնավորապես այն կիրառության հիման վրա, որը բնորոշ է կամ մոտ է նոր խոսքի մասին: Այսպես՝ հայտնի է, որ գոյականն ունի շարահյուսական տարբեր կիրառություններ, սակայն գոյականի իմաստաարժեքային երկատույնը՝ մակբայացումը, կատարվում է նրա այն կիրառության հիման վրա, որը բնորոշ է մակբային՝ այն է՝ պարագայական կիրառության հիման վրա: Գոյականի՝ վերաբերականի արժեք ձեռք բերելու գործում առաջնային է դառնում գործիական հոլովի միայն այն կիրառությունը, որն ավելի մոտ է եղանակավորող բառերի իմաստին, և որի մեջ կա գործողության որակման, գնահատման երանգ, որ խոսողի որոշ վերաբերմունքի արտահայտություն է: Այդ բառերի մեջ որքան ուժեղանում է սուբյեկտիվ տարրը, այնքան թուլանում է այդ բառածևերի քերականական կապը ստորոգյալի հետ:

Դրան զուգահեռ բառաձևերի հոլովական իմաստը նույնպես աստիճանաբար մթագնում է, և բառաձևերը ձեռք են բերում բառական արժեք:

Շարահյուսական դերի մասին խոսելիս չի կարելի անտեսել տվյալ բառի վրա բառաքերականական միջավայրի դերի ու ազդեցության համագամանքը՝ սկսած տվյալ բառի հետ քերականորեն կապակցված բառից, վերջացրած ամբողջական նախադասությամբ, համատեքստով, որտեղ գործածվում է բառը. վերջինս, մանավանդ իր իմաստային հատկանիշներով, չի կարող անտարբեր լինել քերականական այն միջավայրի նկատմամբ, այն կապակցության նկատմամբ, որտեղ գտնվում է: Այս դեպքում կարևորվում են նաև կապակցվող բառերի իմաստային-ձևաբանական հատկանիշների փոխհարաբերությունը, նախադասության բաղադրիչ մասերի բովանդակությունների հարաբերությունը, տրամաբանական կապը, կառուցվածքային, կապակցական որոշ իրողություններ, շարադասական հատկանիշը: Այսպես օրինակ՝ նույն բառը, եթե դրվում է գոյականի վրա՝ որպես լրացում, առարկայական-հատկանշանային իմաստ է արտահայտում, իսկ եթե բայի՝ գործողության-հատկանշանային իմաստ (օրինակ՝ **քաղցր հյուսք** և **քաղցր զրուցել**): Եթե **թէ չէ** շաղկապը դրվում է բարդ նախադասության առաջին բաղադրիչ նախադասության վերջում, արտահայտում է ժամանակի իմաստ, նրա կազմած հարաբերությունը լինում է ստորադասական, իսկ երբ այն դրվում է բարդ նախադասության երկրորդ բաղադրիչի սկզբում, արտահայտում է հակադրության իմաստ, և արտահայտած հարաբերության իմաստը համադասական է: Կամ՝ **եթե ... ապա** զուգադրական շաղկապը հակադրական հարաբերություն արտահայտելու դեպքում կազմում է համադասական կապակցություն, իսկ պայմանի հարաբերություն արտահայտելու դեպքում՝ ստորադասական կապակցություն: «Կիրառության միջավայրը՝ որպես շարահյուսական գործոն, էապես կարող է ազդել բառի էության դրսևորման վրա, նրան կարող է տալ իմաստային ու քերականական այս կամ այն յուրահատկությունը, ուղղվածությունը, իհարկե, տվյալ բառի բառական ընդհանուր արժեքի, նրա բառիմաստի ընձեռած հնարա-

վորության սահմաններում», - գրում է Ս. Աբրահամյանը⁶:

Ձևաբանական գործոնը ևս էական դեր ունի իմաստաարժեքային երկփեղկվածության և խոսքիմասային փոխանցման հարցում:

Յետաքրքրական է, որ բառի քերականական ձևը իմաստաարժեքային զուգաձևությունների դաշտում վերածվում է ուղիղ ձևի, արժեքավորվում և գիտակցվում որպես այդպիսին: **Սա բոլորովին պատահական չէ, այլ խստորեն պատճառաբանված:** Այստեղ, անշուշտ, դեր ունի բառի բառական իմաստը. թեքման տվյալ ձևի մեջ աստիճանաբար առաջանում է իմաստային մի երանգ, որ չկա այլ բառերի (կամ կա սակավաթիվ բառերի) նույն քերականական ձևի մեջ: Բայց բառաձևի արտահայտման խնդրում թեքման տվյալ ձևի դերը ևս անժխտելի է, քանի որ իմաստային այդ յուրահատկությունը բառի միայն քերականական տվյալ ձևի մեջ է արտահայտվում: Սկզբնավորված յուրահատուկ իմաստը այդ բառաձևի որոշ կարգի կիրառություններում, հաճախակի գործածությամբ պայմանավորված, կայունանում է՝ անկայունացնելով նախկին իմաստը: Եվ այսպես՝ **բառի բառական, ձևաբանական, շարահյուսական հատկանիշների յուրահատուկ փոխհարաբերության շնորհիվ տվյալ բառաձևը աստիճանաբար սկսում է վերածվել ինքնուրույն բառի, բառի ուղիղ ձևի:**

Եթե բառի մեջ չկան բառային և քերականական ներքին փոփոխություններ, ապա, հենվելով միայն նրա շարահյուսական գործառույթի վրա, չի կարելի խոսել նրա՝ մի խոսքի մասից մյուսին փոխանցվելու մասին:

Խոսքիմասային փոխանցման շարժումն ունի լեզվական ինչպես նպաստող, այնպես էլ արգելակիչ գործոններ: Եթե վերացական գոյականներում առարկայական հասկացության վերացականությունը նպաստող գործոն է սրանց՝ մակբայի կամ կապի փոխանցվելու համար, ապա փոխանցվող գոյականի հարացուցային ձևը և նրանով արտահայտված քերականական իմաստները արգելակիչ գործոն-

⁶ Ս. Աբրահամյան, Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, Երևան, 1965, էջ 190:

ներ են այդ անցման համար:

Խոսքիմասային մասնակի փոխանցումների շրջապատույտում հայտնված միավորները կոչվել են «**միջակք**», «**միջական անուն**», «**խոսքիմասային տարարժեք բառեր**», «**երկխոսքիմասային (եռախոսքիմասային) բառեր**», «**երկգործառույթ (եռագործառույթ) բառեր**», «**գործառական համանուններ**», «**իմաստաարժեքային զուգաձևություններ**», «**խոսքիմասային բազմիմաստ բառեր**»: Լ. Խաչատրյանը բառի նախկին արժեքը անվանում է «**մայր**» արժեք կամ «**հիմք**» արժեք: «**Մայր**» կամ «**հիմք**» արժեքներին հավելվում է (են) «**նորանուտ**» արժեքը (արժեքները): Ս. Աբրահամյանը տարբերակում է «**ընդունող**» և «**փոխանցող**» խոսքի մասեր, շատերը՝ «**հիմնային**» և «**ածանցյալ**» արժեքներ կամ իմաստներ, ոմանք՝ «**գործուն**» կամ «**կենսունակ**» և «**մեռած**» կամ «**անկենսունակ**» (օրինակ՝ անկենսունակ (մեռած) գոյականներ են՝ **արդարև, հավաստյալ** և այլն):

Բառույթի կամ բառաձևի՝ խոսքիմասային նոր արժեքի (արժեքների) աստիճանական ներառումով, լեզվի զարգացման որոշակի շրջանում հին ու նորանուտ խոսքիմասային արժեքների համատեղումով պայմանավորված՝ արձանագրվում է ձևաբանական-իմաստային կամ խոսքիմասային տեղաշարժ, և էական է դառնում **հին** կամ **նահանջող** ու **նոր** կամ **իշխող** իմաստների համադրումն ու հակադրումը. այս դեպքում կարևորն այն է, թե երկրորդ եզրը իր նոր խոսքիմասային իմաստով կայունացա՞ծ է, կամ կայունացման ո՞ր աստիճանում է գտնվում, հաճախադե՞պ է, համապատասխանո՞ւմ է տվյալ խոսքի մասի ներսում գործող լեզվական օրինաչափություններին, ոճականորեն արդարացվա՞ծ է և այլն:

Իմաստաարժեքային լիակատար և մասնակի տեղաշարժերի կամ տարարժեքության առաջացման հիմք են դառնում՝

1. **բառիմաստի նեղացումը**
2. **բառիմաստի ընդլայնումը**
3. **ստուգաբանական իմաստից հեռանալը**
4. **բառիմաստի զուգորդումը**
5. **բառիմաստի վերացարկումը**

6. ածանցների տարարժեքությունը (-ացի, -արար, -ական, ուն...)

7. հոմանշությունը (սինլքոր բառին հոմանիշ դատարկապորտ, թափառաշրջիկ, պորտաբույժ բառերը ևս տարարժեք են ածականական և գոյականական նշանակություններով: Նույն ձևով՝ հտպիտ-ը (խեղկատակ, ծաղրածու), խարազնագգեստ-ը (ճգնավոր - անապատական - կրոնավոր) և այլն)

8. փոխաբերական իմաստով գործածությունը

9. տերմինացումը

10. անվանադրությունը

11. խոսքիմասային մասնակի ընդհանրությունը (քերականական-իմաստային ընդհանրությունը)

12. շարահյուսական կիրառությունը (շատ դեպքերում վճռորոշ է դառնում շարադասությունը)

13. քերականական կարգերի պարզեցումը

14. դիմային ընդհանրականությունը

15. փոխանվանական գործածությունը

16. շարահյուսական և ոճական տարբեր իրողություններ՝
ա) վերացարկված մտածողությունը. բ) շարահյուսական նույնատիպ գործառույթ ունենալը և շարահյուսական աղերսները. գ) կապակցության կրճատումը. դ) կայուն կապակցության վերականգնումը. ե) որպես կոչական գործածվելը (հաճախական գործածությամբ բառի մեջ զարգանում է առարկայական-գոյականական իմաստը, օրինակ՝ թշվառական, սրբազան, վեհափառ). զ) լեզվական-կիրառական միջավայրը. է) գործածական (կիրառական) հաճախականությունը. ը) հուզաարտահայտչական երանգավորումը. թ) հասարակական արժեքավորումն ու գունավորումը և այլն:

խոսքիմասային տեղաշարժերն ու փոխանցումները տեղի են ունենում՝

ա) նյութական իմաստ ունեցող բառերի ներսում և դրանց միջև,

բ) սպասարկու բառերի ներսում և դրանց միջև,

գ) նյութական իմաստ ունեցող և սպասարկու բառերի միջև:

Տվյալ լեզվի ներքին կառուցվածքի առանձնահատկություններով պայմանավորված՝ բառերի ձևաբանական իմաստի ու արժեքի տեղաշարժերը հիմնականում կատարվում են երկու ուղղությամբ՝

1. միջխոսքիմասային

2. ներխոսքիմասային:

Առաջինի դեպքում բառույթի՝ բառածևի ձևաբանական իմաստի ու արժեքի տեղաշարժն ընթանում է խոսքիմասային համակարգի օղակների միջև: Միջխոսքիմասային տեղաշարժերի քննության ընթացքում ամենից առաջ անհրաժեշտ է նշել հարցին առնչվող լեզվամիտումները՝

1. գոյականների ածականացում, մակբայացում, սպասարկու բառերի շարքին անցնելը

2. ածականների գոյականացում, մակբայացում, հազվադեպ նաև սպասարկու բառերի շարքում հայտնվելը

3. թվականների ածականացում, գոյականացում (հազվադեպ)

4. դերանունների ածականացում, սպասարկու բառերի շարքն անցնելը

5. դերբայների ածականացում, գոյականացում, սպասարկու բառերի շարքն անցնելը

6. որոշ եղանակային ձևերի՝ սպասարկու բառերի շարքն անցնելը

7. մակբայների ածականացում, սպասարկու բառերի շարքն անցնելը

8. սպասարկու բառերի նյութականացում

9. նյութական և սպասարկու բառերի՝ շարահյուսական՝ խոսքային միավորների (միջարկությունների, ողջույնի, բարեմաղթանքների) անցումը, խոսքային միջավայր թափանցելը և այլն:

Երկրորդ դեպքում իմաստաարժեքային տեղաշարժերը սահմանափակվում են նույն խոսքի մասի շրջանակներում. միևնույն ձևամիավորը, առանց ձևային փոփոխության, ձևաբանական մի իմաստից անցնում է մեկ ուրիշի՝ դուրս չգալով իր խոսքիմասային շրջանակներից:

Ներխուճիմասային նման միավորների իմաստային զատումը կատարվում է շարահյուսական մակարդակում:

Խոսքիմասային տեղաշարժերը վերջնակետ ունեն՝ անցում խոսքիմասային մասնակի փոխանցումից լիակատար փոխանցման (տարարժեքությունից միարժեքության)⁷. սա է լեզվում գործող մշտական կանոնը՝ միակերպության՝ կատարելության ձգտումը: Բառի սկզբնական խոսքիմասային իմաստը միանգամից չի վերանում, նորն էլ միանգամից չի հաստատվում, և խոսքիմասային լիակատար փոխանցման երկարատև գործընթացում տարարժեքությունը սոսկ անցողիկ օղակ է:

⁷ Չպետք է կարծել, որ խոսքիմասային տեղաշարժերը բոլոր դեպքերում հանգեցնում են խոսքիմասային լիակատար փոխանցման. որոշ դեպքերում տարարժեքությունից միարժեքության անցումը կատարվում է ոչ թե խոսքիմասային նոր իմաստի հաստատմամբ, այլ նրա նահանջով՝ հնի վերահաստատմամբ:

2. ԽՈՍՔԻՄԱՍԱՅԻՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՍԱԳՐՔԵՐՈՒՄ

2. 1. Խոսքիմասային տեղաշարժերի և փոխանցումների քննությունը բուհական դասագրքերում

Բուհական դասագրքերի հեղինակները «խոսքի մասեր» ընդհանուր թեմայի ներսում սովորաբար առանձնացնում են «խոսքիմասային փոխանցումներ» ենթաբաժինը, որտեղ խոսվում է և՛ լիակատար, և՛ մասնակի փոխանցումների մասին, ապա յուրաքանչյուր խոսքի մասի քննության շրջանակներում այլևայլ խնդիրների կապակցությամբ աջքաթող չեն արվում այն բառերը, որոնց քերականական իմաստը երկփեղկված է, և որոնք տարարժեքային են:

Մ. Ասատրյանը «Ժամանակակից հայոց լեզու» դասագրքում «խոսքի մասերի փոխանցումը» ենթաբաժնում անդրադառնում է ձևաբանորեն չտարբերակված մի շարք բառերի տարբեր խոսքիմասային իմաստներ արտահայտելու իրողությանը, ածական և գոյական, դերբայ և ածական, դերբայ և գոյական, գոյական և կապ, մակբայ և կապ, գոյական և մակբայ, ածական և մակբայ միջխոսքիմասային փոխանցումներին՝ նման բառերի համար որևէ գիտաբան չօգտագործելով: Գծային հաջորդականությամբ յուրաքանչյուր խոսքի մասի՝ այլ խոսքի մասերի հետ հարաբերակցությունները ներկայացնելիս նորից շեշտում է նմանատիպ բառաշերտի առկայությունը: Այսպես՝ ենթակայական դերբայի իմաստաքերականական հատկանիշները նշելուն զուգընթաց՝ լեզվաբանն ընդգծում է, որ մի շարք ենթակայական դերբայների մեջ (**գրող, ծնող, ընթերցող, ընտրող, ուսանող, աշխատող, ծառայող, սիրող, մեղադրող, մտածող, հետազոտող, ուսումնասիրող, արդյունաբերող, շահագործող** և այլն) զարգացել է նաև թանձրացական-առարկայական բովանդակություն, և նրանք միևնույն ժամանակ նաև գոյականներ են: Նա գրում է. «...ենթակայական դերբայն իր մեջ համատեղում է բայի և գոյական անվան իմաստներն ու հատկանիշները: Այստեղից էլ՝ ենթակայական դերբայը հեշտությամբ կարող է փո-

խանցվել գոյականի, որովհետև նա իր մեջ գոյականի հատկանիշներն արդեն իսկ ունի (ինչպես որ հարակատար դերբայն ունի ածականի հատկանիշներ): Ինչպե՞ս է տեղի ունենում ենթակայական դերբայի գոյականացումը: Դա տեղի է ունենում բառերի շարահյուսական կիրառության հիմքի վրա: Ենթակայական դերբայը գոյականի է վերածվում, երբ որոշ շարահյուսական կապակցությունների մեջ հաճախակի գործածվելով՝ իմաստային յուրահատուկ զարգացում է ապրում, խամրում է նրա արտահայտած գործողության, ընթացքի գաղափարը, և միևնույն ժամանակ նրա ընդհանուր առարկայական նշանակությունը վերածվում է թանձրացականի: Հասկանալի է, որ դրանով նույն ձևը չի դադարում դերբայ լինելուց. այլ կիրառությունների մեջ նա պահում է իր հարաբերակցությունները բայական ձևերի հետ՝ որպես դերբայ՝ գործողության, ընթացքի և այլ առարկայական նշանակության գաղափարներով միաժամանակ: Այսպիսով՝ լեզվում առաջանում են համանուններ: Վերածվելով գոյականի՝ ՈՂ ձևերը զրկվում են սեռի, բայական խնդրառության հատկանիշներից՝ ձեռք բերելով գոյականին հատուկ հատկանիշներ»⁶: Կամ՝ «Տեսականորեն ամեն մի ենթակայական դերբայ պոտենցյալ ձևով նաև գոյական է և կարող է ըմբռնվել սոսկ առարկայական նշանակությամբ՝ գործողության, ընթացքի գաղափարից անկախ: Ահա սա է ենթակայական դերբայների՝ զանգվածային ձևով գոյականների վերածվելու գաղտնիքը»⁷:

Ածականի խոսքիմասային առանձնահատկություններին անդրադառնալիս Մ. Ասատրյանը հայերենին հատուկ մի երևույթ է համարում նաև որական ածականների պարագայական կիրառությունը, որը, նրա բնութագրմամբ, պատահական, անցողիկ հատկանիշ չէ. «Լեզվում, ինչպես զանգվածային է, ասենք **լավ** և **հիանալի** բառերի որոշչային կիրառությունը..., նույնքան զանգվածային է դրանց պարագայական կիրառությունը... Եվ ամենևին էլ ճիշտ չէ այս կիրառություններից առաջինը համարել հիմնական, խոսքիմասային

⁶ Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 2002, էջ 249-250:

⁷ Նույն տեղում, էջ 252:

իմաստից բխող, իսկ երկրորդը՝ ոչ հիմնական, շարահյուսական կիրառությամբ պայմանավորված: Ասենք նաև այն, որ «մաքուր» մակբայ համարվող որոշ բառեր կարող են դրվել նաև գոյականների վրա... Եզրակացությունն այն է, որ հայերենում որակական ածականները և մակբայները շատ դեպքերում տարբերակված չեն, և միևնույն բառը կարող է հանդես գալ և հանդես է գալիս ածականի ու մակբայի դերով: Հասկանալի է, որ առաջին դեպքում տվյալ բառն ածական է, իսկ երկրորդ դեպքում՝ մակբայ»¹⁰: Ինչպե՞ս վարվել. Մ. Ասատրյանը, լեզվի պատմական զարգացման ընթացքը նկատի առնելով, եզրահանգում է. «Սակայն ինչպես էլ մոտենանք այս հարցերի լուծմանը, մի բան պարզ է ու որոշակի. լրիվ տրամաբանական ու հետևողական և հակասություններից բացարձակ զերծ քերականական համակարգեր չեն եղել և ըստ երևույթին չեն էլ լինի, որովհետև կենդանի ու զարգացող և ժողովրդի բերանում հավերժ ծփացող այդ անհուն օվկիանոսը քերականական կաղապարներով ու կանոններով պարփակելն ուղղակի անհնար է, և լեզվաբանը միշտ վերահասու է լեզվի միայն ամենաընդհանուր օրինաչափություններին»¹¹:

Խոսքիմասային փոխանցումներն ու իմաստարաժեքային տեղաշարժերի վերաբերյալ շատ հարցեր առավել հանգամանալից ներկայացված են Ալ. Մարգարյանի «Հայոց լեզվի քերականություն» գրքում¹²: Մասնակի փոխանցումների ոլորապտույտում հայտնվածները կրում են **երկխոսքամասային բառեր, եռախոսքամասային բառեր** գիտանվանումները: Լեզվաբանը, ով խոսքի մասերի որոշման ու դասակարգման հարցում հիմնական է համարում իմաստային սկզբունքը, որին և ստորադասվում են մյուս (ծևաբանական, շարահյուսական, բառակազմական) սկզբունքները, «խոսքի մասերի հետագա քննարկումն ու լուսաբանումը» ենթազլխում գրում է.

¹⁰ Նույն տեղում, էջ 334:

¹¹ Նույն տեղում, էջ 339:

¹² Ալ. Մարգարյան, Հայոց լեզվի քերականություն, Զևաբանություն, Երևան, 2004, տես՝ § 92, § 93, § 94, § 95, § 111, § 112, § 113, § 350, § 351, § 352, § 353, § 731, § 868, § 869, § 870, § 871, § 872, § 923, § 924, § 925, § 988, § 989, § 1022, § 1023:

«...Խոսքի մասերը, իբրև բառաքերականական միավորներ, իրոք որոշվում են բառերի ինչպես բառային, այնպես էլ քերականական ընդհանուր, վերացարկված իմաստով կամ իմաստներով: Բայց այստեղ իսկ հարկ է նշել, որ բառեր կան, որոնք ինքնին ոչ թե սոսկ մեկ, այլ երկու և երբեմն նաև ավելի մեծ վերացարկված քերականական իմաստներ են արտահայտում և անխուսափելիորեն ու բնականաբար դրանց համապատասխան բառարաններում ներկայացվում տարբեր խոսքիմասային պատկանելությամբ: Եվ հետևաբար՝ այդպիսի բառերի խոսքիմասային պատկանելությունը ևս որոշվում է ոչ թե նրանց շարահյուսական, այլ դարձյալ արտահայտած վերացական իմաստով: Ըստ այդմ էլ մեծ թիվ են կազմում ամենից առաջ այն բառերը, որոնք հավասարապես և՛ գոյական, և՛ ածական կամ գերազանցապես գոյական և ապա ածական են: Նման երկխոսքամասային բառերից են, օրինակ, **աղքատ, անդորր, ապագա, բարեկամ, գալիք, դամբանական, զազրախոս, ընկեր, թիկնապահ...** Եռախոսքամասային նշանակությամբ գործածվող բառերից են, օրինակ, **անգլերեն, անդորր, իտալերեն, սուտ, թշվառ, սխալ, քաջ** և այլն... Խոսքի մասերի համակարգում բավական մեծ թիվ են կազմում և՛ իբրև ածական, և՛ իբրև մակբայ գործածվող բառերը, ինչպես՝ **ամուր, բարձր, գաղտնի, դառը...** և այլն: Կան նաև բառեր, որ գոյականի և կապի (օր.՝ **ժամանակ, չափ**), մակբայի և կապի (օր.՝ **դուրս, հետո, ներս**), ածականի և կապի (օր.՝ **նման, հակառակ, համապատասխան**), կապի և շաղկապի (օր.՝ **մինչև, նախքան**) խոսքամասային նշանակությամբ են գործածվում»¹³:

Ըստ Յու. Ավետիսյանի՝ խոսքի մասերի փոխանցումը լեզվական այն երևույթն է, երբ լեզվի զարգացման ընթացքում բառը ձեռք է բերում խոսքիմասային նոր իմաստ՝ պահպանելով խոսքիմասային նախկին իմաստը կամ կորցնելով այն, և հիմնականում պայմանավորված է բառի բառային իմաստի փոփոխությամբ. եթե բառիմաստի փոփոխությունը առաջ է բերում նաև քերականական իմաստի փոփոխություն, փոխվում է նաև խոսքիմասային պատկանելությունը.

¹³ Նույն տեղում, էջ 45-46:

«Այսպես՝ **համեստ, ազնիվ, վիրավոր, մրգաշատ, մուֆ** և առարկայի հատկանիշ ցույց տվող բազմաթիվ այլ բառեր ձեռք են բերել գոյականական իմաստ և վերածվել են նաև գոյականների՝ գործածվելով իբրև անձնանուններ, տեղանուններ և այլ բառեր: Խոսքիմասային փոխանցման հիմք կարող է դառնալ նաև մի խոսքի մասի բառի կիրառությունը այլ խոսքի մասի բառի նշանակությամբ: Օրինակ՝ **Առաջ** այդ մասին գրեթե չէր խոսվում (մկբ.): Գնացքը մեկ ժամ **առաջ** մեկնեց (կապ): Խոսքի մասերի փոխանցման կարևոր աղբյուրներից մեկը զրաբարյան քարացած քերականական ձևերն են, որոնք, ժամանակի ընթացքում կորցնելով բառական իմաստը, կրելով նաև քերականական փոփոխություններ, ծնունդ են տալիս խոսքի մասերի գանազան փոխանցումների: Օրինակ՝ **կեցցե** բառը...»¹⁴:

Ֆ. Խլղաթյանը, ընդունելով, որ գոյականի խոսքիմասային կարգերից գոյականացնող ունակություն ունեն որոշյալությունը, հոգնակիացումը, հոլովումը, և գոյականացման ժամանակ այլ խոսքի մասերի գոյական դառնալը կրում է սոսկ ժամանակավոր կամ պատահական բնույթ, եզրակացնում է. «...Միատիպ կապակցություններում տևական գործածության հետևանքով գոյականաբար գործածված բառը կարող է կայունացնել ձեռք բերած հատկանիշները և անցնել գոյականների շարքը՝ գիտակցվելով իբրև գոյական առհասարակ: Այս դեպքում մենք գործ ունենք խոսքի մասերի փոխանցման հետ: Հայերենում բավական տարածված է նաև գոյականացման հակառակ երևույթը՝ գոյականի վերածումը այլ խոսքի մասերի: ...Առանց բառակազմական ձևությանների և բաղադրիչների գոյականը պատմականորեն կարող է վերածվել ածականի (**մուֆ, լույս, խավար, գյուղացի, անդորր**) և ավելի հաճախ՝ կապի: Կապերի մի մասը ծագում է գոյականներից (**մոտ, մեջ, վրա, տակ** և այլն): Առանձին դեպքերում վերականգնելով երբեմնի նյութական իմաստը՝ դրանք հանդես են գալիս իբրև գոյական: Իսկ կապական բառերը (**ժամանակ, առջև, երեսից, ուղղությամբ, պատճառով, վերև** և այլն) կապի

¹⁴ Յու Ավետիսյան, Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Գիրք Ա, Երևան, 2014, էջ 118-119:

վերածվելու ճանապարհին գտնվող գոյականներ են»¹⁵: Դասագրքում առանձնացված է նաև «Անցումներ ածականի և այլ խոսքի մասերի միջև» ենթաթեման: Նա գրում է. «Ժամանակի ընթացքում ածականների երկու տեսակների, ածականների և այլ խոսքի մասերի միջև փոխանցումներ են կատարվել. ածականները վերածվել են գոյականների, գոյականները և այլ խոսքի մասերը՝ ածականների: 1. Որակական ածականների անցումը հարաբերականի (հատկապես տերմինաբանության ոլորտում (խուլ մարդ (որակական), խուլ բաղաձայն (հարաբերական), թեթև բարձ (որակական), թեթև արդյունաբերություն (հարաբերական)): 2. Հարաբերական ածականների անցումը որակականի (Այսպիսի անցումը կատարվում է փոխաբերական գործածության դեպքում. երկաթյա շղթա (հարաբերական) և երկաթյա կամք (որակ), պողպատյա լար և պողպատյա նյարդեր: 3. Ածականի փոխանցումը գոյականի. տևական գործածության հետևանքով մի շարք ածականներ վերածվել են գոյականի. **բանվոր, զինվոր, ժամապահ**: Սա լրիվ գոյականացում է: Որոշ բառեր այս փոփոխության դեպքում պահպանել են նախկին՝ ածականական իմաստը՝ գոյացնելով համանունություն (**սուր, բանակային, զինվորական, հարվածային, կուսակցական, հիվանդ, կոր, ծանոթ, երիտասարդ**): 4. Այլ խոսքի մասերի անցումը ածականի. գոյական - ածական (**զյուղացի, մուք, լույս**), դերբայ - ածական (**քնած, երես առած, մաշված, հուզված, ծնված, սիրած**), չիոլովվող գոյական, (**լուծվող սուրճ, ցնցող նորություն, ծաղկող տնտեսություն**), թվական - ածական (**առաջին սեր, առաջին ուսանող**)»¹⁶:

Խոսելով խոսքի մասերի դասակարգման հիմունքների մասին՝ Մ. Միրունյանը «խոսքիմասային փոխանցումներ»-ում նշում է. «Հայերենի բոլոր բառերն ըստ իրենց ընդհանուր իմաստի և ձևաբանական ու շարահյուսական հատկանիշների մտնում են այս կամ այն խոսքի մասի մեջ: Սակայն լեզվի պատմական զարգացման ընթացքում տեղի է ունենում խոսքիմասային փոխանցում. այն է՝ որոշ բա-

¹⁵ Ֆ. Խլիպյան, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 2007, էջ 70-72:

¹⁶ Նույն տեղում, էջ 92-93:

ներ մի խոսքի մասից անցնում են մեկ այլ խոսքի մասի: Այս երևույթը հիմնականում տեղի է ունենում բառերի շարահյուսական կիրառության հիման վրա, այսինքն՝ գործածվելով այլ խոսքի մասի պաշտոնով՝ բառն աստիճանաբար ծեռք է բերում տվյալ խոսքի մասին հատուկ իմաստային, ձևաբանական ու շարահյուսական հատկանիշներ, բառի իմաստը երկփեղկվում է, և ի հայտ է գալիս խոսքիմասային տարարժեքություն: Իսկ երբ երկփեղկված բառը հեռանում է իր հիմնական խոսքիմասային իմաստից և այլևս չի գործածվում այդ իմաստով, տեղի է ունենում խոսքիմասային լիակատար փոխանցում»¹⁷: «Բառերի շարահյուսական գործառույթը» ենթաթեմայում շարունակում է. «Հայերենում կան զգալի քանակությամբ բառեր, որոնք խոսքիմասային արժեքով երկատված են. այդպիսի բառերի խոսքիմասային արժեքների բաշխումը կատարվում է շարահյուսական մակարդակում: Այս կարգի միավորները կոչվում են խոսքիմասային տարարժեք բառեր: Դրանք կարող են հավասարապես հանդես գալ երկու և ավելի խոսքիմասային արժեքներով: Օրինակ՝ 1. Գոյական // ածական տարարժեք բառեր (հերոս, այրի, ազատ, բարբարոս, բանակային, տնամերձ, ապստամբ, գերի, դավաճան, սուրբ, կախարդ, հսկա) 2. ածական // մակբայ տարարժեք բառեր (շատ, լավ, անդուլ) 3. գոյական /// ածական // մակբայ (հարուստ, որբ, աղքատ, խելագար, անակնկալ)»¹⁸:

Հիշատակված դասագրքերում հարցի լեզվական և գործառական քննության ամփոփումը ընդհանուր առմամբ նույնն է. հայերենի բոլոր բառերն ըստ իրենց ընդհանուր իմաստի և ձևաբանական ու շարահյուսական հատկանիշների մտնում են այս կամ այն խոսքի մասի մեջ, սակայն լեզվի պատմական զարգացման ընթացքում տարբեր հիմունքներով տեղի են ունենում խոսքիմասային տեղաշարժեր, որոնք հանգեցնում են խոսքիմասային փոխանցումների, իսկ խոսքիմասային մասնակի փոխանցումը կամ տարարժեքությունը այդ

¹⁷ Մ. Միրումյան, Հայոց լեզու, Տեսական և գործնական դասընթաց, Երևան, 2012, էջ 124:

¹⁸ Նույն տեղում, էջ 122:

բարդ գործընթացում անցողիկ օղակ է. այդ օղակում հայտնված բառերի իմաստաքերականական և գործառական հատկանիշների վերհանումը լեզվի կարևորագույն խնդիրներից է:

2. 2. խոսքիմասային տեղաշարժերի և փոխանցումների վերաբերյալ տեսական հարցերը դպրոցական դասագրքերում

Տեսական գիտելիքներ հաղորդելը, անհրաժեշտ բառապաշարով և քերականական գիտելիքներով զինելը կարևոր նախապայմաններ են ուսուցման նպատակներն իրագործելու ճանապարհին: Դպրոցական ուսումնառության գործընթացում դասանյութն ավանդաբար բաղկացած է տեսական մասից (դասից) և նրան հաջորդող հարցերից, առաջադրանքներից ու վարժություններից: Մերօրյա դպրոցական դասագրքերում խոսքիմասային փոխանցումների վերաբերյալ գիտելիքների ներառումը ինչ-որ չափով կամայական բնույթ ունի, որի արդյունքում թեմայի ուսուցումը տեսականորեն մակերսային է, գործնականորեն՝ թերի:

Դեռևս 1952 թ. Ա. Ղարիբյանն իր «Հայոց լեզվի դասագրքում» նշում է. «Որոշ թվով ածականներ հավասարաչափ կերպով ճանաչվում են թե՛ որպես գոյական և թե՛ որպես ածական: Այդպիսի բառերի որ խոսքի մասին պատկանելը որոշվում է տվյալ գործածության իմաստով: Եթե ածականները գործ են ածվում որպես հատուկ անուն, նրանք համարվում են գոյական... Փոքր թվով գոյականներ, երկար ժամանակ ածականաբար գործածվելով, ճանաչվում են նաև որպես ածական»¹⁹: Կամ՝ «Մի շարք բառեր հավասար չափով և՛ մակբայ են, և՛ գոյական կամ ածական: Օրինակ՝ **դուրս, ներս, վերև, ներքև, հեռու, առաջ** և այլն»²⁰: «Մի շարք գոյականներ, ածականներ և մակբայներ խոսքի մեջ գործ են ածվում որպես կապ, ուստի

¹⁹ Ա. Ղարիբյան, Հայոց լեզվի դասագիրք, Երևան, 1952 թ., էջ 194:

²⁰ Նույն տեղում, էջ 356:

կոչվում են կապական բառ»²¹:

Նույն դասագրքի՝ 1960 թ-ին վերահրատարակված տարբերակում առանձնացված է հատուկ վերնագիր՝ «Ածականի փոխանցումը գոյականի և հակառակը»... Նա գրում է. «Խոսքի մեջ ածականները կարող են գործածվել գոյականաբար, ինչպես և գոյականները՝ ածականաբար: Փոքր թվով ածականներ, երկար ժամանակ գործածվելով որպես գոյական, կարող են վերածվել գոյականի: Օրինակ՝ **բանակային, ազգական, պաշտոնյա, եղևնի** և այլն: Այսպիսի բառերը պետք է ընդունել որպես գոյական: Եթե ածականները գործածվում են որպես հատուկ անուն, նրանք համարվում են գոյական: Օրինակ՝ **Պարթև, Անուշ, Պայծառ, Քնքուշ, Սիրուն** և այլն: Փոքր թվով գոյականներ, երկար ժամանակ ածականաբար գործածվելով, ճանաչվում են նաև որպես ածական: Օրինակ՝ **մութ (մութ գիշեր), խավար (խավար գիշեր)** ևն: Այսպիսի բառերի ո՛ր խոսքի մասին պատկանելը որոշվում է գործածության իմաստով»²²:

1964 թ. հեղինակը վերահրատարակված դասագրքում ձև ցույց տվող մակբայների շարքում հավելել է «եղանակավորող մակբայներ» ենթատեսակը, որում թվարկվածները հետագայում վերաբերականների բառային կազմն են համալրելու:

Նույն հարցերին գրեթե նույն չափով անդրադարձել է Ա. Գրիգորյանը, միայն թե 1953 թ. հրատարակած դպրոցական դասագրքում մինչև գոյական անունին անցնելը կա «Խոսքի մասերի փոխանցումները հայերենում» դասանյութը. առանձնացված է նաև «Գոյականացումը հայերենում» ենթաթեման: Նա գրում է. «Յուրաքանչյուր բառ իր արտահայտած հիմնական նշանակությամբ և ունեցած քերականական ձևին համապատասխան մտնում է այս կամ այն խոսքի մասի մեջ: Օրինակ՝ **քար, թռչուն** գոյական են, **մեծ, գեղեցիկ**՝ ածական, **յոթ, ութերորդ**՝ թվական, **նա, այդպիսի**՝ դերանուն, **բնավ**՝ մակբայ և այլն: Սակայն կենդանի խոսքի մեջ բառերի այս կատեգորիաները շատ մեծ չափով չեն բաժանված իրարից, և հաճախ

²¹ Նույն տեղում, էջ 361:

²² Ա. Դարիբյան, Հայոց լեզու (Դասագիրք V-VII դասարանների համար), Երևան, 1960 թ., էջ 140:

է լինում, երբ որևէ խոսքի մասի պատկանող որևէ բառ այս կամ այն կապակցության մեջ գործածվում է ոչ թե իր հիմնական իմաստով, այլ մի ուրիշ խոսքի մասի: **Մի խոսքի մասը մեկ ուրիշ խոսքի իմաստով հանդես գալու երևույթը կոչվում է խոսքի մասերի փոխանցում:** Ժամանակակից հայերենում չկա մի խոսքի մաս, որ չունենա փոխանցում...»²³:

Տասնյակ տարիներ ձևաբանության ուսուցումն իրականացվել է եդ. Աղայանի և Յովհ. Բարսեղյանի կազմած դասագրքերով: Քննարկվող հարցը հեղինակների ուշադրությունից չի վրիպել: 1965 թ. լույս տեսած 5-7-րդ դասարանների համար նախատեսված դպրոցական դասագրքում, խոսելով գոյականների ածականաբար գործածության և ածականների գոյականաբար գործածության մասին, եզրակացնում են՝ «Սովորաբար ածականի գործածությունը գոյականաբար չի նշանակում, թե տվյալ ածականը դադարում է ածական լինելուց և դառնում է գոյական, կամ գոյականը դադարում է գոյական լինելուց և դառնում ածական: Դրանք պարզապես ածականի կամ գոյականի գործածության առանձին դեպքեր են՝ մեկը մյուսի փոխարեն: Սակայն այդպիսի գործածությունների հետևանքով ժամանակի ընթացքում ածականը կարող է ձեռք բերել գոյականի իմաստ և դառնալ գոյական՝ անկախ նախադասությունից: Օր.՝ սուր բառը նշանակում է հատու, բայց նա այժմ իբրև գոյական էլ գործածվում է որպես սառը զենքի անուն, **կոլտնտեսական, կուսակցական** բառերը և՛ ածական են, և՛ գոյական»²⁴: Կամ՝ «Կան գոյականներ, ածականներ, մակբայներ և այլ բառեր, որոնց այս կամ այն ձևը հաճախ գործ էածվում որպես ետադրություն (նպատակով, հետո, առաջ, առջև, չանցած, անունով, անունից, առիթով, դուրս, երեսից, զուգընթաց, ընթացքում, ժամանակ, կից, կողմից, հակառակ, համաձայն, համեմատ, հետևանքով, հավասար, համապատասխան, հեռու, ձեռքից, ձեռքով, մեկ, միջոցով, միջո-

²³ Ա. Գրիգորյան, Յայոց լեզու, (Դասագիրք միջնակարգ դպրոցի VII-X դասարանների համար), Երևան, 1953, էջ 129-130:

²⁴ Գ. Բարսեղյան, Եդ. Աղայան, Յայոց լեզու, 5-7 դասարանների համար, Երևան, 1965, էջ 152:

ցին, ներս, ներքև, որպես, պատճառով, վերև, տարբեր, բացառությամբ, սկսած և այլն)»²⁵:

Հետագա վերահրատարակություններում (1965-1994 թթ.) հաղորդվելիք գիտելիքների առումով առանձնապես փոփոխություններ չեն կատարվել:

Վերջին տասնամյակներում հրատարակված դասագրքերում տեսական նյութը գրեթե նույնն է, միայն թե նմանատիպ բառերի քանակն է ավելացել: Այնուամենայնիվ եղած նյութերը համակարգված չեն: Ամենակարևորն այն է, որ մերօրյա հանրակրթական դպրոցի առարկայական ծրագրում որպես ուսուցանվող նյութ առանձնացված է «խոսքիմասային փոխանցումներ»²⁶ թեման, և, ըստ ծրագրի, դասագրքում «Մակբայ»-ից հետո պետք է ընդգրկվեն խոսքիմասային փոխանցումների մասին գիտելիքներ: Սակայն այս թեման գործող դասագրքերում տեղ չի գտել: Պատճառը լեզվական «նորություն» լինելը չէ, այլ անհետևողականությունը կամ ծրագրային պահանջները շրջանցելը: Ավելին. այս փոքր թեմայի շրջանակներում դասագրքի և ծրագրի անհամապատասխանության խնդրին զուգահեռ անհասկանալի է մնում ծրագրի պահանջը. ինչո՞ւ այն պետք է անցնել «Մակբայ» թեմայից և ոչ թե բոլոր խոսքի մասերն անցնելուց հետո: Կամ՝ եթե նմանատիպ բառերի վերաբերյալ այսքան տեղեկություններ են ներառված դպրոցական դասագրքերում, ապա ինչո՞ւ հանրակրթական դպրոցի ծրագրերում արտացոլված չեն... Հետաքրքիր փոխանհամապատասխանության պատկեր է դրսևորվում. ծրագրում կա «խոսքիմասային փոխանցումներ» թեման, դասագրքերում՝ ոչ, մյուս կողմից դասագրքերում տարբեր խոսքի մասերի շրջանակներում խոսքիմասային տեղաշարժերի վերաբերյալ նյութեր կան, իսկ ծրագրերում համապատասխանաբար ներառված չեն. տեղին է օգտագործել ժողովրդական խոսքի պատրաստի կառույցներից մեկի նաև հավանիչ տարբերակը՝ «Ամանում կա, անունը չկա»:

²⁵ Նույն տեղում, էջ 324:

²⁶ Տես՝ Հայոց լեզու գրականություն, Հանրակրթական դպրոցի չափորոշիչ և ծրագիր, Երևան, 2006, էջ 105:

Ֆ. Խլղաթյանի դպրոցական դասագրքերում նյութի թե՛ տեսական և թե՛ գործնական մատուցումը քիչ է տարբերվում նախորդներից. առանձնացված է «Գոյականացող ածականներ» ենթաթեման²⁷:

Գործող դասագրքերում ժամանակի թելադրանքով նման բառերի շրջանակն ընդլայնված է, տեսական մասը համեմատաբար ծավալուն է: 7-րդ և 8-րդ դասարանների համար նախատեսված հայոց լեզվի դասագրքերից քաղված են թեմային վերաբերող հետևյալ նյութերը²⁸.

- «Կան բառեր, որոնք հավասարապես կարող են հանդես գալ և՛ իբրև գոյական, և՛ իբրև ածական (**աղքատ, անցյալ, այրի, անդորր, ապագա, ապստամբ, բարեկամ, վայրենի, գիծ, խենթ, դավաճան, խավար, գող, ծանոթ, ծերունի, դավադիր, կտրիճ, հարազատ, հարևան, հարուստ, թավուտ, հիվանդ, հով, միաբան, մութ, որբ, սուտասան, սուրբ, ցուրտ, ունկնդիր, դպրոցական, զինվորական, հոգևորական, աշխարհական, բանակային, գիտնական, հրետանավոր, հետևակային, ծովային, կամավոր**)»²⁹:

- «Հիմք և վերջավորություն» թեմայի տակ որպես լրացում «Բառերի շտեմարանի»՝ **Խմացի՛ր** նշանակությամբ նշանի տակ գրված է. «**Երկուշաբթի, երեքշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի, ուրբաթ, շաբաթ, կիրակի** բառերը հայերենում գոյականներ են. կիրառվում են նաև որպես ածական և մակբայ: Օրինակ՝ ... »³⁰:

- Հարակատար դերբայի մասին խոսելիս անորոշաբար նշվում է. «**Ած-ով վերջացող ոչ բոլոր բառերն են հարակատար դերբայ կամ ոչ միայն անդեմ բայ են, ինչպես՝ սիրած, արկած, արարած, դիպված, մթամած, հասարակած, վարկած, հողված**»³¹:

- Ընդհանրական մակբայների վերաբերյալ հաղորդվելիք գիտե-

²⁷ Տես՝ Ֆ. Խլղաթյան. 1. Հայոց լեզու, 5, Երևան, 2000: 2. Հայոց լեզու, 6, Երևան, 1999:

²⁸ Քանի որ ըստ ծրագրային պահանջի թեման պետք է ուսուցանվի գործող դասագրքերում ներառված գիտելիքներին համապատասխան, ուստի սրանցում եղած տեսական նյութը ևս ներկայացված է գրեթե ամբողջությամբ՝ առանց քննական վերլուծության:

²⁹ Հ. Բարսեղյան, Փ. Մեթիխանյան, Հայոց լեզու, 7, Երևան, էջ 43:

³⁰ Նույն տեղում, էջ 16:

³¹ Նույն տեղում, էջ 91:

լիքների շրջանակներում առանձնացվում են մի շարք մակբայներ, որոնք «կարող են հանդես գալ նաև այլ խոսքի մասի արժեքով. դրանք են՝ գոյական և մակբայ - **վաղը, այսօր**, ածական և մակբայ - **արագ, դանդաղ, եռապատիկ, միահամուռ, հապճեպ, միաձայն, շատ, շտապ** և այլն, ածական, գոյական և մակբայ - **հետիոտն, ուղիղ**, կապ և մակբայ - **առաջ, դեմ, հետ, հետո**»³²:

«Բառերի շտեմարան»-ում կարդում ենք նաև՝ «1. Վերաբերականի նշանակությամբ գործածվում են նաև **կեցցես, երանի, երնեկ, ուր է թե, ափսոս** բառերը, ըստ որում միայն ափսոս-ի համար բերված են ոչ այնքան համոզիչ օրինակներ («ափսոս - արտահայտում է վիշտ, խղճահարություն՝ **ավա՜ղ, ցավալի է** նշանակությամբ: Օրինակ՝ Ափսո՜ս, Անո՜ւշ, սարի ծաղիկ, Ափսո՜ս իգիթ քո յարին...: Իբրև գոյական նշանակում է ափսոսանք: Օրինակ՝ Համոզված եմ, որ ափսոսդ գալու է, և դու քեզ չես ներելու: Իբրև ածական նշանակում է խնայելու, ափսոսանքի արժանի: Օրինակ՝ Հայրս տեսավ, ջերմորեն նախատեց. «Հացն ափսոս է, չեն տրորի ու անցնի»³³: «**էլ - 1. մակբայ - 1. այլևս, ևս, դարձյալ, էլի 2. ավելի ևս... 3. նույնպես ... 2. վերաբերական - 1. գոնե նշանակությամբ (...)** 2. հաստատում, սաստկացում (...) 3. հանկարծակիություն, անսպասելիություն (...) 4. զայրույթ, դժգոհություն՝ բա, հապա, մի՞թե նշանակություններով (...) 5. հավաքականություն (օր.՝ տասն էլ ժամանակին եկան): **3. շաղկապ - 1. և, նաև, իսկ (...): 2. էլ... էլ, և՛...և՛ (...)** 3. թեկուզ, թեպետ, եթե նույնիսկ (...)»³⁴:

- «Կամ մի շարք բառեր, որոնք կարող են լինել թե՛ կապ, թե՛ մակբայ կամ գոյական ու ածական (**առաջ, հետո, դեմ, մոտ, տնից վերև չափ, նման**): «Բառերի շտեմարան»-ում կարդում ենք՝ 1. **անգամ** (գ., մ.) - քանակական, դասական թվականների և քանակ ցույց տվող բառերի հետ ցույց է տալիս կրկնություն, բազմապատիկություն (...) 2. **անգամ** (վեր.) - նույնիսկ, մինչև իսկ»³⁵: «Մի շարք բառեր հանդես են գալիս թե՛ իբրև կապ, թե՛ իբրև շաղկապ. դրանք են՝

³² Նույն տեղում, էջ 136:

³³ Հ. Բարսեղյան, Փ. Մեյթիխանյան, Հայոց լեզու, 8, Երևան, 2012, էջ 30:

³⁴ Նույն տեղում, էջ 34:

³⁵ Նույն տեղում, էջ 43:

մինչև, նախքան, չնայած, փոխանակ և այլն»³⁶:

- «**Բնավ, ամենևին** բառերը, մակբայական կիրառությունից բացի, ուղղակի խոսքում որպես պատասխան բառ գործածվելիս առավել հարում են ժխտական վերաբերականներին, ինչպես՝ - Դու իմ խոսքերը երևի չես մոռանա: -Բնավ: - Համաձայն ես ինձ հետ: - Ամենևին³⁷»:

«Վերաբերական» խոսքիմասային համակարգում կարևոր են հարցին առնչվող հետևյալ տեղեկությունները. «1. Սահմանափակման, ընդգծման, առանձնացման վերաբերական նշանակությամբ գործածվում են **առանձնապես, առավելապես, գերազանցապես, գլխավորապես, հատկապես, մասնավորապես, պարզապես** և այլ մակբայներ, երբ դրվում են ոչ թե բայով, այլ ուրիշ խոսքի մասով արտահայտված անդամի վրա (**առավելապես Վահանը, հատկապես ութ** և այլն): 2. Գործողության կատարման կամ չկատարման վերաբերյալ խոսողի ցանկության, կամային, վերաբերմունքային նշանակությամբ գործածվում են **թող, մի, երանի, երանի թե, երևեկ, երևեկ թե, ապա, հապա, դե** բառերը: Ապա ասա, թե ով քեզ դրդեց կռվի մեջ մտնելու: Նկատի ունեցիր, որ **դե**-ն կարող է նախադասության մեջ իբրև ծայնարկություն հանդես գալ: Սակայն այս դեպքում **դե**-ն պարտադիր պետք է նախադասությունից տրոհվի և իր վրա շեշտ կրի: 3. Զիջական, մեկնական վերաբերմունքային նշանակությամբ գործածվում են **ինչևէ, ինչևիցե, համենայն դեպս, // այնուամենայնիվ, այսուամենայնիվ, այսուհանդերձ, ի դեպ, ի միջի այլոց, // իմիջիայլոց, ընդհակառակն (ընդհակառակը), արդ, այսպիսով, մի խոսքով** և այլ շաղկապական և կապակցական բառեր...»³⁸:

Նույն հեղինակների 7-րդ դասարանի համար նախատեսված հայոց լեզվի դպրոցական դասագրքի «Հավելված 3»-ի «Ուղղագրական-ծևակազմական բառացանկում» ընդգրված են նաև տարարծեբային բառեր, ինչպես՝

³⁶ Նույն տեղում, էջ :

³⁷ Նույն տեղում, էջ 26:

³⁸ Նույն տեղում, էջ 28:

անգամ - գ. , մկ. վ,
 ավելորդ - ած., գ.,
 գեղարդակիդ գ., ած.,
 ընդոժին- ած., գ.,
 համակ- ած. , մկ.,
 հետիոտն- գ., ած., մկ.,
 ճգնակյաց - ած., գ.,
 շուտափույթ- ած. , գ.,
 չորեքշաբթի գ., ած., թվ.,
 պարզկա- ած., գ.,
 սևամորթ - ած., գ.,
 անդամալուծ գ., ած.

անգիջում- ած., մկ.,
 քաղածայն- ած., գ.,
 երկվորյակ - ած., գ.,
 լացակումած - ած. ,իրկտ.դ.,
 հանապազօր/-յա- մկ., ած.,
 հյուրընկալ- ած., գ.,
 մազապուրծ- ած., մկ.,
 շուրջբուրդը- գ. , ած.,
 չորսքուրդը- գ., մկ.,
 ստնտու-ած., գ.,
 ուղղակի-ած. , մկ.,
 գեղջուկ գ., ած.:

առօրյա - ած., գ.,
 քացօքյա ած., գ.,
 երկուստեք մկ. ած.,
 կարեվեր-ած., մկ.,
 հարյուրյակ - ած., գ.,
 հորձանուտ- ած., գ.,
 մուրացիկ - ած. , գ.,,
 չորեքթաթ- ած., մկ.,
 պապակ- ած., գ.,
 սգահանդերձ- գ., ած.,
 քառատրոփ- ած., մկ.

Այսպիսով՝ խոսքիմասային տեղաշարժերի և փոխանցումների վերաբերյալ տարբեր ժամանակների տարբեր դասագրքերում տեսական գիտելիքների և գործնական-քերականական դրսևորումների համաքննությունը հանգեցնում է հետևյալին՝ ժամանակն է, որ տասնամյակներ շարունակ ուշադրությունից չվրիպած այս իրողությունը, որը լեզվաշինության գործուն միջոցներից է դարձել, որպես առանձին թեմա տեղ գտնի դպրոցական դասագրքերի խոսքիմասային համակարգում, ավելին՝ նաև այս տեսանկյունից փոխհամապատասխանեցվեն ծրագիրն ու դասագիրքը: Ծրագրային պահանջներին համապատասխան կազմված նոր կամ վերահրատարակվելիք դասագրքերում թեման կարելի է ներառել կամ՝ ծրագրով հանձնարարելի «խոսքիմասային փոխանցումներ» վերնագրով, կամ «Տարարժեք բառեր» վերնագրով՝ խոսքի մասերն անցնելուց հետո, կամ էլ յուրաքանչյուր խոսքի մասի վերաբերյալ հաղորդվելիք գիտելիքների շրջանակներում առանձնացվի ենթաթեմա՝ յուրաքանչյուր խոսքի մասի իմաստարժեքային տեղաշարժերի ու փոխանցումների մասին տեղեկություններով (օրինակ՝ գոյականի փոխանցումը ածականի, մակբայի, կապի, ածականի փոխանցումը գոյականի, մակբայի, կապի, բայի փոխանցումը գոյականի, ածականի, վերաբերականի, շաղկապի, կապի... Կամ՝ «խոսքիմասային տեղաշարժերը գոյականական համակարգում» և այլն):

3. ԹԵՄԱՅԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

3. 1. Թեմայի ուսուցումը բուհում

Բուհական ուսումնական ծրագիրը կրթության բովանդակությունը կանոնարկող նորմատիվ փաստաթուղթ է: Թեման ուսուցանելիս ծրագրի տեսակներից (տիպային, աշխատանքային, հեղինակային) նպատակահարմար է օգտագործել հեղինակայինը, որի հիմքում կրթական նույն չափորոշիչներն են, սակայն նախընտրելի է ուսուցման անհատական ստեղծագործական ձևը: «Խոսքիմասային տեղաշարժեր և փոխանցումներ» թեմայի ուսուցման գործընթացը մոտավորապես հետևյալ կառուցամասերն ունի՝

1. Բովանդակային-տեսական մաս: Այն արտացոլվում է բուհական ուսումնական ծրագրում, դասագրքերում և ուսումնաօժանդակ ձեռնարկներում. այս դեպքում անհրաժեշտ է տեսական նյութերը հավաքել, պարզել ուսուցման ընդհանուր նպատակները և կազմել դասախոսությունների փաթեթ՝ հատկացնելով որոշակի ժամաքանակ: Թեմայի ուսուցումը նպատակահարմար է սկսել ընդհանրական-ներածական գիտելիքների հաղորդումից՝ «Խոսքի մասեր» և «խոսքիմասային փոխանցումներ», այնուհետև շարունակել ըստ խոսքիմասային հերթականության (գծային սկզբունքով)՝ խոսափելով անհարկի կրկնություններից: Ենթաթեմաների տրոհման պատկերը կարող է այսպիսին լինել՝

ա. փոխանունություն, խոսքիմասային լիակատար և մասնակի փոխանցումներ, փոխանվանական և ինքնանվանողական արժեքով գործածություններ.

բ. ածականացող և մակբայացող գոյականներ, գոյականացող ածականներ.

գ. մակբայացող ածականներ և ածականացող մակբայներ.

դ. խոսքիմասային տեղաշարժեր նյութական խոսքի մասերից ոչ նյութական խոսքի մասեր (փոխանցումներ կապի, շաղկապի, վերաբերականի և ծայնարկության).

ե. խոսքիմասային տեղաշարժեր ոչ նյութական խոսքի մասերի

շրջանակներում.

գ. ներխուսքիմասային տեղաշարժեր:

Բուհերում ուսումնական պարապմունքների ավանդական ձևը դասախոսությունն է. այն նյութի համակարգված հաղորդումն է դասախոսի կողմից: Ըստ էության պասսիվ գործընթաց է, և ուսանողների ընդգրկումը հիմնականում տեղի է ունենում լսելու և գրելու կամ սղագրելու միջոցով: Ըստ անհրաժեշտության՝ դասախոսը կարող է դադար տալ և անցնել կարճ հարց ու պատասխանի: Ցանկալի է խրախուսել ուսանողների կողմից հարցեր տալը (դասախոսությունից հետո):

2. Մեթոդական մաս: Այս դեպքում կարևորվում է մեթոդների, մեթոդական հնարների ընտրությունը դասավանդման, ուսումնառության և գնահատման ու ստուգման կառուցամասերում:

3. Ուսուցման արդյունքների ստուգում և գնահատում:

4. Ուսումնական գործունեության տեսակները՝ մեթոդական ամենաընդհանուր հանձնարարականներով:

5. Առաջարկվող գրականության ցանկ (հայերեն և օտար լեզուներով դասագրքեր ու ձեռնարկներ, համացանցային գրականություն, դասախոսությունների փաթեթ, էլեկտրոնային շտեմարաններ, հենքեր):

6. Հարցեր, գործնական-քերականական վարժություններ և առաջադրանքներ, սեմինարներ, կուրսային աշխատանքներ: Տեսական գիտելիքներ հաղորդելը, անհրաժեշտ բառապաշարով և քերականական գիտելիքներով զինելը դեռևս բավարար չեն ուսուցման նպատակն իրագործելու ճանապարհին: Տեսական-բովանդակային նյութի յուրացման արդյունքներն ամփոփելուց հետո անհրաժեշտ է անցնել գործնական քերականությանը: Ուսուցանվող թեմայի կարևոր բաղադրամաս է նաև սեմինարների, գործնական աշխատանքների, հարցերի, քերականական վարժությունների և առաջադրանքների ընդգրկումը: Բնականաբար՝ ուսումնառությունն ամբողջական դարձնելու նպատակով ուսուցանվող տեսական գիտելիքները անհրաժեշտ է համակցել նրանց հաջորդող, նրանցից բխող և տրամաբանական հաջորդականությամբ տրվող տա-

րաբնույթ վարժությունների, հարցերի և առաջադարանքների կատարմանը: Տեղին է նկատել, որ ԵՊՀ-ում կուրսային և ավարտական աշխատանքների որոշ թեմաներ հենց այս նյութին են վերաբերում, իսկ անցկացվող միջանկյալ ստուգումների ժամանակ նմանատիպ առաջադրանքներ հաճախ են տրվում, ինպես օրինակ՝

- Տրված նախադասություններում նշել ընդգծված բառերի խոսքիմասային պատկանելությունը:

- Կազմել 2-ական նախադասություն տրված բառերով, որոնք համապատասխանաբար մեկում գոյական են, մյուսում՝ ածական, մեկում բայ են, մյուսում՝ վերաբերական, մեկում՝ հարակատար կամ ենթակայական դերբայ, մյուսում՝ ածական կամ գոյական, կամ և՛ ածական են, և՛ գոյական...

- Կազմել 3-ական նախադասություն, որոնցում տրված բառը և՛ գոյական է, և՛ մակբայ է, և՛ կապ...

- **Գրող, ընթերցող, ուսանող, աշխատող** բառերը գործածել նախադասությունների մեջ մեկ որպես ենթակայական դերբայ, մեկ որպես գոյական. ի՞նչ հատկանիշներով են դրանք տարբերվում...

- Տրված նախադասություններում որոշել **հեռու, ընտրող, այլ, չնայած, նման, արագ, ուրախ** բառերի ձևաբանական հատկանիշները. դրանց այլ խոսքիմասային իմաստներով կազմել նախադասություններ և այլն:

Բուհերի համար նախատեսված գործնական աշխատանքների ձեռնարկներում վարժություններն ու առաջադրանքները համեմատաբար շատ են³⁰: Ընդհանուր առմամբ առաջադրվող պահանջները տարբեր ձեռնարկներում նույնաբնույթ են՝

³⁰ 1. Ա. Աղիլխանյան, Կ. Միքայելյան, Ա. Մանուկյան, Հայոց լեզվի և խոսքի մշակույթի գործնական առաջադրանքների ձեռնարկ, Երևան, 2015: 2. Ձ. Աղաջանյան, Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքների գործնական աշխատանքների ձեռնարկ, Երևան, 2009: 3. Ս. Ասատրյան, Ժ. Ճշմարիտյան, Ժամանակակից հայոց լեզվի գործնական աշխատանքների ձեռնարկ, Երևան, 1981: 4. Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանություն, Երևան, 2010: 5. Դ. Գյուլջինյան, Ն. Հեքեքյան, Գործնական աշխատանքների ձեռնարկ, Երևան, 2002: 6. Ռ. Սարգսյան, Ժամանակակից հայոց լեզվի գործնական պարամունքների ձեռնարկ, Երևան, 2009: 7. Ս. Միրումյան, Հայոց լեզու, Տեսական և գործնական դասընթաց, Երևան, 2012:

- Առանձնացնել այն բառերը, որոնք արտահայտում են և՛ առարկայի, և՛ հատկանիշի իմաստ: **(Ծանր, գիծ, խուլ, բամբ, դպրոցական, ծովային, աշնանային, օդային, կախարդ, թշնամի, գող, ցամաքային, ազգայնական, արևմտյան, գվարդիական, հորդառատ, խոպան, հյուսիսային, շարքային, սիգապանծ):**

- Տրված բառերով կազմել նախադասություններ կամ բառակապակցություններ՝ դրանք գործածելով թե՛ ածականի, թե՛ գոյականի արժեքով **(ավագ, բարբարոս, դավաճան, խավար, հերոս, հով, հսկա, մութ, առևտրական, վիրավոր, բանակային, ազնվական, հրշեջ, հանցագործ, ապստամբ):**

- Կազմել հետևյալ բայերի ենթակայական դերբայը: Առանձնացնել գոյականի բառային արժեք ձեռք բերած միավորները **(նախագծող, առաջնորդող, աշխատող, ծնող, ուրացող ևն):**

- Կազմել **գրել, սիրել, թարգմանել, մոլորվել, նախագծել, համակարգել** բայերի հարակատար դերբայը և որոշել, թե դրանցից որոնք են ձեռք բերել գոյականի խոսքիմասային նշանակություն:

- Գրել հարակատար դերբայից անկախացած հետևյալ ածականների իմաստները՝ **հասած, զարգացած, ընկած, քնած, հոտած:**

- Կազմել նախադասություններ՝ հետևյալ բառերը գործածելով և՛ գոյականի, և՛ ածականի արժեքով՝ **հասած, կարդացած, խորոված, աշխատող, գրող, ծաղկող:**

- **Ժամանակ, անունից, երեսից, գծով, ձեռքով, ընթացքում, պահին, նպատակով** բառերն ու բառածևերը բառակապակցությունների մեջ գործածել որպես գոյականներ և կապական բառեր:

- Կազմել նախադասություններ, որոնցում **անկախ, նման, զուգընթաց, հավասար** բառերը գործածված լինեն որպես ածականներ և կապեր:

- **Չեռու, առաջ, դեմ, մոտ, հետո, շուրջ** բառերը կապակցությունների մեջ գործածել մակբայների և կապերի արժեքով:

- Կազմել նախադասություններ՝ հետևյալ բառերը գործածելով կապի և շաղկապի արժեքներով՝ **մինչև, չնայած, փոխանակ, նախքան:**

- Կազմել նախադասություններ՝ հետևյալ բառերը գործածելով

շաղկապի և վերաբերականի կամ մակբայի արժեքներով՝ **հենց, միայն, կարծես, ապա:**

- Կազմել նախադասություններ՝ վերաբերականի նշանակությամբ գործածելով հետևյալ մակբայները՝ **բուրրովին, երբեք, բնավ, ամենևին:**

- Կազմել նախադասություններ՝ վերաբերականի նշանակությամբ գործածելով հետևյալ բայածևերը՝ **խնդրեմ, տես, բեր, եկ // արի, թող, կարծես:**

- Տրված նախադասությունների մեջ գտնել տարարժեք բառերը և որոշել նրանց խոսքիմասային պատկանելությունը:

-Առանձնացնել որակական և հարաբերական ածականները, իսկ վերջիններիս մեջ էլ նրանք, որոնք ունեն մաև որակական նշանակություն և այլն:

Թեմայի գործնական ուսուցումը կարելի է իրագործել տարբեր եղանակներով:

ԵՂԱՆԱԿ 1.

Քայլ 1. Ձինվորական, մութ, դաշնակցական, առյուծազուլիս... բառերով կազմել նախադասություններ թե՛ գոյականական, թե՛ ածականական արժեքներով և արտածել բանաձևը. ուսանողները գրում են նախադասություններ (**ա. Ձինվորական համազգեստով անծանոթը մոտեցավ դարպասին: բ. Ձինվորականը հայացքով ուղեկցեց հեռացող կնոջը**), կազմում բանաձևը՝ **Ա // Գ կամ Գ // Ա:**

Քայլ 2. Կազմել 2-ական նախադասություն, որոնցում **տխուր, դանդաղ, քնքուշ, սրընթաց...** բառերը և՛ ածական են, և՛ մակբայ: Ուսանողները կատարում են առաջադրանքը (**ա. Ամեն իրիկուն պառկում էի ձորաբերանին և տխուր նայում վար: բ. Աղջիկն ականա հիշեց երիտասարդի տխուր աչքերը:**), կազմում բանաձևը՝ **Ա // Մ կամ Մ // Ա:**

Քայլ 3. - Չափ, ժամանակ, նման, հավասար, ձեռքով, շեշտակի, արագ... բառերի խոսքիմասային պատկանելությունը նշել և

դրանց կապական կիրառությամբ կազմել նախադասություններ: Ուսանողները նշում են տրված բառերի խոսքիմասային արժեքը (Օրինակ՝ **վեր**-ը մակբայ է, **նման**-ը՝ ածական. Սարերից **վեր**, չարերից **վեր**, սովորական բառերից **վեր** թափառում է հեգ մի հոգի: Մենք նման ենք մեր քարերին, մեր քարերի **նման** ամուր ենք) և բանաձևում՝ **Գ // Կ, Ա // Կ, Մ // Կ**:

Քայլ 4.- Ասես, կարծես, թող, տեսնես, արի բայերը գործածել նյութական և վերաբերմունքային (որպես վերաբերական) խոսքիմասային արժեքներով: (Օրինակ՝ **ա. Տրորում է սիրտս ասես իր ոտքի տակ Լուսամուտիս տակով անցնող ամեն անցորդ** (Պ. Սևակ): **բ. Սպասել - սպասում եմ, որ լոկ ասես. «ես հասկացա»:** (Պ. Սևակ). բանաձևն է՝ **Բ // Վ**:

Եվ այսպես՝ քայլ առ քայլ ուսանողները ներկացնում են բանաձևերը:

Վերջին քայլում առաջադրանքը կարելի է բարդացնել. տրված բառերը գործածել նախադասությունների մեջ՝ ելնելով խոսքիմասային հուշումից՝ **ա. հայերեն - Գ // Ա // Մ, բ. հեռու- Գ // Ա // Մ // Կ, գ. սուտ- Գ // Ա // Մ** և այլն:

Դասախոսի ուղղորդմամբ ուսանողները բանաձևերի կողքին տալիս են բացատրությունները:

Գիտելիքների ամրապնդման և ստուգողական նպատակներով կարելի է նաև հակադարձ գործողությունը կատարել տալ՝ ըստ բանաձևերի գրել բառեր և կազմել նախադասություններ. **Ա // Գ, Գ // Ա, Ա // Մ, Մ // Ա, Գ // Կ, Գ // Մ, Ա // Կ, Մ // Կ, Բ // Վ, Կ // Շ, Գ /// Ա /// Մ, Բ /// Կ /// Շ, Գ /// Ա /// Մ /// Կ** և այլն:

Ամփոփման արդյունքում ուսանողները եզրակացնում են, որ խոսքիմասային համակարգը քարացած չէ. ճիշտ է՝ բառերի մեծ մասն ունի մեկ խոսքիմասային իմաստ, բայց հաճախ որոշ բառերի խոսքիմասային իմաստը տեղաշարժերի է ենթարկվում, կատարվում են խոսքիմասային լիակատար կամ մասնակի փոխանցումներ. լիակատար փոխանցման դեպքում բառը միարժեք է, իսկ մասնակի փոխանցման դեպքում՝ տարարժեք: Բանաձևերը հենց այդ տեղաշարժերի զարգացման միտումներն են:

ԵՐԱՆԱԿ 2.

Թեմայի գործնական ուսուցման ընթացքում կարելի է կիրառել նաև անկյունների մեթոդը. սա համագործակցային ուսումնառության վարժություն է, որի նպատակը վիճահարույց հարցերի շուրջ բանավեժ ծավալելն է. խնդրո առարկան վիճահարույց է:

1. Մտագործի միջոցով բացահայտվում են քննարկվող թեմայի վերաբերյալ ուսանողների գիտելիքները, և դասախոսի կողմորոշիչ, ուղղորդիչ հարցերի պատասխանների արդյունքում պարզորոշ է դառնում նրանց դիրքորոշումը:

2. Հակադիր կողմերը հավաքվում են տարբեր անկյուններում. մի անկյունում՝ նրանք, ովքեր կարծում են, որ այդ բառերը, անկախ շարահյուսական կիրառությունից, խոսքիմասային արժեքը չեն փոխում: Մյուս անկյունում հակառակ ձևով մտածողներն են. բառախմաստային, քերականական և այլ հիմունքներով փոխվում է բառերի խոսքիմասային պատկանելությունը: Երրորդ անկյունում հավաքվածների կարծիքով դրանք համանուններ են: Չորրորդ կողմի ներկայացուցիչները պնդում են, որ դրանք ածականաբար, գոյականաբար, մակբայաբար կամ փոխաբերական իմաստով գործածություններ են:

Տարակարծություններ կան նաև այդպիսի բառերն անվանելու խնդրում՝ տարարժեք բառեր, երկխոսքիմասային, եռախոսքիմասային բառեր, իմաստարժեքային զուգաձևություններ, խոսքիմասային բազմիմաստություն և այլն. կարելի է քննարկման նյութ դարձնել նաև տարբեր եզրույթների ընտրության հարցը (անգամ առաջարկել նոր անվանումներ գտնել):

3. Որոշակի ժամանակ հատկացնել՝ իրենց դիրքորոշումը տեսականորեն և գործնականորեն համոզիչ փաստարկներով ձևակերպելու:

4. Յուրաքանչյուր խմբի խոսնակ ներկայացնում է խմբի դիրքորոշումը. աստիճանաբար խմբի անդամները ևս միանում են քննարկմանը՝ այն զուգակցելով գործնական քայլերով:

5. Քննարկումից հետո խմբերից յուրաքանչյուրը հանրագումարի է բերում իր դիրքորոշումը և հիմնավորող փաստարկները:

ԵՐԱՆԱԿ 3.

Նախօրոք հանձնարարել մի շարք եռախոսքիմասային բառեր (էլ, **հեռու, իտալերեն, սուտ, մոտ, անդորր, համընթաց** և այլն), պահանջել բառարանների օգնությամբ ճշտել դրանց իմաստները՝ ուշադրություն կենտրոնում պահելով խոսքիմասային հղումները: Այնուհետև լսարանը բաժանել 3-5 խմբի, բաժանել թերթիկներ, որոնց վրա միայն մեկ բառ է գրված: Առաջին ուսանողը բառի կողքին նշում է խոսքիմասային արժեքները (Օրինակ՝ **համընթաց-մակ-բայ, ածական, կապ**):

Երկրորդ ուսանողը կազմում է նախադասություն տվյալ բառի որևէ արժեքով՝ առանց նշելու խոսքիմասային արժեքը (**Գետի համընթաց տարուբերումը խաղաղեցրեց նրա հոգին**):

Երրորդը պիտի կռահի, թե որ խոսքիմասային արժեքով է գործածվել բառը նախադասության մեջ, և նոր նախադասություն կազմի երկրորդ արժեքով (**Ձինվորները համընթաց քայլում էին՝ ուշադրություն չդարձնելով հավաքվածներին**):

Չորրորդ ուսանողը կազմում է երրորդ նախադասությունը՝ երրորդ խոսքիմասային արժեքով (**Ծովի ալիքներին համընթաց տարուբերվում էր մակույկը**):

Հինգերորդ ուսանողը նշում է տվյալ բառի ձևաբանական հատկանիշներն ըստ երեք նախադասությունների (**1. - ածական, որակական. 2. - ձևի մակբայ. 3. - կապ (կապական բառ)**): Յուրաքանչյուր խումբ կազմում և գրավոր կամ բանավոր ձևով ներկայացնում է համատեղ մշակված նյութի կարճ շարադրանքը: Կարելի է թերթիկները փոխանցել խումբ առ խումբ՝ ըստ անհրաժեշտության ուղղելու, ճշտելու, խմբագրելու: Յուրաքանչյուր խմբից մեկը ներկայացնում է կատարված աշխատանքը, այնուհետև ուսանողները համադրում են իրենց խմբային փոխգործունեության արդյունքները, եզրակացություններ կատարում և ամփոփում:

Կարելի է վերջնարդյունքի ստուգումն ու գնահատումը անցկացնել «հաստ» հարցերի թերթիկով և «կողմնորոշիչ հարցաշարով»:

3. 2. Թեմայի ուսուցումը ժամանակակից դպրոցում

Դպրոցական դասագրքերում դասանյութը բաղկացած է մասնատեսական մասին հաջորդող հարցերից, առաջադրանքներից ու վարժություններից:

Արդեն ասվել է, որ ծրագրով նախատեսված «խոսքիմասային փոխանցումներ» թեման նոր դասագրքերում ընդգրկված չէ: Ավելին՝ նյութի վերաբերյալ գիտելիքներ տրված են տարբեր խոսքի մասերի կազմում. բնականաբար հարցերը, վարժություններն ու առաջադրանքները քիչ են: Շտեմարաններում մնամատիպ թեստային առաջադրանքներ կան. սրանք հիմնականում ձևակերպվում են հարցի ձևով (դրական կամ ժխտական)՝ լուծման՝ հնարավոր 4 պատասխաններից մեկը ընտրելու սկզբունքով: Ծրագրի, դասագրքերի և շտեմարանների անհամապատասխանության արդյունքում կարևոր է դառնում ուսուցչի աշխատանքը: Ուսուցիչը պարտավոր է ցաքուցրիվ նյութերն ու առաջադրանքներն ի մի բերել, համակարգել, ամբողջացնել: Թեմայի ուսուցման գործնական յուրահատկությունն այն է, որ աշակերտները միաժամանակ կրկնում են այն խոսքի մասերը, որոնց շրջանակներում դրսևորվում են խոսքիմասային տեղաշարժերը. ըստ էության ամփոփման հիմքի վրա գիտելիքների նոր կառույցի հաղորդման դաս է:

Այս նյութը հնարավորություն է տալիս մասնաշաղկապային կենտրոնում պահել ուղղախոսության ու ուղղագրության հարցերը: Այսպես օրինակ՝ ենթադրենք՝ աշակերտներն արդեն գիտեն, որ լեզուների անունները եռարժեք են, այսինքն և՛ գոյական են, և՛ ածական, և՛ մակբայ, ուսուցիչը կարող է վարժությունների ու առաջադրանքների կատարման ընթացքն այնպես ուղղորդել, որ ընտրվեն ուղղագրական և ուղղախոսական դժվարություն ունեցող լեզվանուններ՝ **աքքադերեն, հրեերեն, արևմտահայերեն** և այլն: Կամ՝ եթե արդեն ուսուցանվել է, որ կրկնավոր բարդությունները մասնաձևական, և՛ մակբայական կիրառություններ ունեն, ապա կարելի է մասնաշաղկապային կենտրոնում պահել այդպիսի բառերի՝ գծիկով գրության դեպքերը, հարկ եղած դեպքում անդրադառնալ

հնչյունափոխությամբ:

Հիշատակված դպրոցական դասագրքերում վարժությունների և առաջադրանքների պահանջները մոտավորապես այսպիսին են՝

- Որոշել, թե ընդգծված բառերն ինչ խոսքի մաս են (խելքից ղուրս բան ես ասում... Իքսը և իգրեկը հավասար մեծություններ են... և այլն):

- Առաջ, մեջ, վրա, տակ, հետո բառերն օգտագործել և՛ իբրև կապ, և՛ իբրև այլ խոսքի մաս:

- Գտնել ածականները և գործածել իբրև գոյական:

- Գտնել գոյական դարձած ածականները:

- Գտնել այն գոյականները, որոնք գործածվել են ածականաբար (որոշիչ են):

- Որոշել, թե ընդգծված բառերն ի՞նչ խոսքի մաս են և ի՞նչ խոսքի մասի իմաստով են հանդես եկել...

- Կազմել նախադասություններ՝ երկար, լավ, խոսել, յոթ, չոր- ղորդ, ձեռք, դեմ բառերն օգտագործելով այլ խոսքի մասի իմաստով:

- Դուրս գրել կապերն ու կապական բառերը: Որոշել, թե համա- նուն բառերից որոնք են կապեր, որոնք՝ ոչ (Մենք նման ենք մեր քարերին, Մեր քարերի նման ամուր (Վ. Հովհաննիսյան) և այլն):

- Գտնել տեքստում եղած վերաբերականը և համանուն բայաձևը, որոշել վերջինիս եղանակը, դեմքը, թիվը (Մշուշ, դու ծածկիր աշխարհքը անծիր, Թո՛ղ, դարման մի՛ դիր իմ խորունկ խոցին, Եվ թո՛ղ ինձ մենակ, գնա՛ հեռացիր...(Ավ. Իսահակյան) Թող շուրջս փռվի անանց լռություն, Թող ինձ չհիշեն, թող ինձ մոռանան... (Վ. Տերյան)...

- Ստորև տրված նախադասություններից դուրս գրել ընդգծված բառերը, որոշել դրանց խոսքիմասային պատկանելությունը, բա- ցատրել ձևաբանական և շարահյուսական տարբերությունները (Մայրերը որդիներ են ծնել ցավոք և հեծությամբ (Ս): Ոչինչ թե միայն է նրա փարախը (ՀԹ) և այլն):

- Ստորև տրված նախադասություններում որոշել թող, մի, ասենք, ասա, կարծես բառերի գործածություններն իբրև վերաբերական. նույն բառերի մյուս գործածությունները վերլուծել ձևաբանորեն:

- Որոշել, թե ընդգծված բառերն ինչ խոսքի մաս են (Ծան.՝ ընդգծված են տակ, հեռու, հավասար, մոտիկ, ոուրսո, վրա, նման և այլ բառեր):

- Կազմել նախադասություններ՝ նպատակ, ժամանակ, պատճառ, ուղղություն, ձեռք, երես, միջոց բառերն օգտագործելով որպես գոյական և կապական բառ:

- Կազմել նախադասություններ՝ անկախ, հակառակ, նման, համաձայն, մոտ, կից բառերը գործածելով իբրև ածական և իբրև կապ:

- Կազմել նախադասություններ՝ մինչև, նախքան, չնայած, փոխանակ բառերը օգտագործելով որպես կապ և որպես շաղկապ:

- Բառարանի օգնությամբ ծշտել բարբարոս, մարմար, բուրեղ, կենդանի բառերի իմաստները և խոսքիմասային արժեքը...

Շտեմարաններում⁴⁰ առաջադրանքների բնույթն այսպիսին է՝

- Ընդգծվածներից ո՞րը գոյական չէ:
- Տրված ենթակայական դերբայներից ո՞րն է նաև գոյական:
- Ո՞ր նախադասության մեջ է ընդգծվածը մակբայ:
- Ո՞ր նախադասության մեջ է հավասար բառը կապ:
- Ո՞ր նախադասության մեջ է ըչ-ը վերաբերական:
- Տրված նախադասություններում ընդգծվածներից քանի՞սն են կապ և այլն:

⁴⁰ Տես՝ Շտեմարան, Հայոց լեզու և գրականություն, մաս III, Երևան, 2015, էջ 55-56, էջ 81-82...

3. 2. 1. Դասանյութի պլանավորումը, կառուցվածքը և ուսուցման եղանակները

Ինչպես ցանկացած թեմայի, այնպես էլ «Խոսքի մասային տեղաշարժեր և փոխանցումներ» թեման ուսուցանելիս հիմնային են «Հայոց լեզու» առարկայի ուսումնական ընդհանուր նպատակները՝ ժամանակակից գրական հայերենին համապատասխան խոսք կառուցելը, լեզվական ճաշակի և խոսքի մշակույթի զարգացումը, տարբեր տիպի բառարաններից, տեղեկատու և օժանդակ ձեռնարկներից, համացանցից օգտվելու և ինքնուրույն կերպով գիտելիքներ ձեռք բերելու հմտությունների մշակումը, միջառարկայական կապերի ամրապնդումը և այլն: Դասի նպատակային դրույթները սահմանվում են առարկայական և միջնակարգ կրթության պետական չափորոշիչների համաձայն:

Յուրաքանչյուր ուսուցիչ դասից առաջ նախապատրաստվում է, ծրագրում անելիքը և ուսուցման ժամանակակից մեթոդների⁴¹ իմացութամբ կանոնավորում իր աշխատանքը: Սա նշանակում է գինվել տեսական գիտելիքներով, ձեռքի տակ ունենալ մեթոդական գրականություն և, հաշվի առնելով նյութի ծավալը, խորությունը, մատուցման եղանակը, սովորողների տարիքը, պատկերացնել դասի ողջ ընթացքը, ի՞նչ ենք ուսուցանում և ի՞նչ նպատակով ու ի՞նչ ակնկալիքներով, ինչպե՞ս ենք ուսուցանում և ի՞նչ ուղիներով ու միջոցներով:

Ուսուցման գործընթացի արդյունավետությունը մեծապես կախված է դասի ճիշտ պլանավորումից, որը կարելի է ներկայացնել հետևյալ հաջորդականությամբ՝

⁴¹ 1. Ինտերակտիվ // համագործակցային մեթոդներ (ինտերակտիվ-ը անգլերեն բառ է. **ինտեր-** փոխադարձ, **ակտ** - գործողություն. նշանակում է «փոխանցել կամ գրույցի, երկխոսության մեջ գտնվել ինչ-որ մեկի կամ համակարգչի հետ»): **ա.** T-աձև աղյուսակ **բ.** M-աձև աղյուսակ **գ.** հասկացությունների քարտեզ **դ.** Վենի դիագրամ **ե.** պրիզմա **զ.** քառաբաժան է. խորանարդում (**նկարագրիր, համեմատիր, զուգորդիր, կիրառիր, վերլուծիր, թեր և դեմ, փաստարկներ թեր**). **2.** Փոխներգործուն գրառումների համակարգ (**ՓԳՅ**) կամ մեթոդ (**ա.** խճանկար **բ.** շրջագայություն պատկերասրահով **գ.** ապագայի անիվ **դ.** մտքերի տարափ **ևճ**):

ա. նախապատրաստական աշխատանքներ դասից առաջ.

բ. բուն դասը.

գ. վերլուծական աշխատանք դասից հետո:

Կողմնորոշիչ դեր ունի ժամաքաշխումը, իսկ ժամանակի ճիշտ տնօրինումը պլանավորված գործընթացի իրականացման և բարձր արդյունավետության երաշխիքն է:

Կարևոր է նաև հիմնաբառերի կամ բանալի-բառերի, հիմնական հասկացությունների առանձնացումը, ինչպես օրինակ՝ **փոխանցում, խոսքիմասային տեղաշարժ, լիակատար փոխանցում, մասնակի փոխանցում, գոյականացում, ածականացում, կապական բառեր, երկխոսքիմասային բառեր, տարարժեք բառեր** և այլն:

Անհրաժեշտ է ապահովել միջառարկայական կապերը. այս թեման ուսուցանելու դեպքում ևս լեզվի և գրականության կապն ակնառու է (**Տրված բանաստեղծական հատվածում գտնել... Որևէ գրողի ստեղծագործության որևէ հատվածից..., Գրականության դասագրքից.....** և այլն): Այլ առարկաների հետ միջառարկայական կապերի ապահովվումն այնքանով է հեշտանում, որ շատ տարարժեքային բառեր իրենց մի եզրով տերմիններ են՝ երաժշտական, ֆիզիկական, տեխնիկական, տեղեկատվական և այլն: Անշուշտ, այս տիպի առաջադրանքներն առաջին հերթին լեզվական ուղղվածություն ունեն և հայոց լեզվի ծրագրային խնդիրների լուծմանն են ծառայում:

Ցանկացած թեմայի ուսուցման ընթացքում կարևորվում են **տնային հանձնարարությունները**. դրանք ևս պիտի նպատակաուղղվեն գիտելիքների յուրացմանն ու գործնականում կիրառելու կարողությունների ամրապնդմանը, նպաստեն սովորողների ինքնուրույն մտածողության և վերլուծական կարողությունների դրսևորման, ինքնուրույն դատողություններ անելու, սեփական կարծիքը հայտնելու և այն հիմնավորելու ունակությունների ձևավորմանը, լեզվական ճաշակի և խոսքի մշակույթի զարգացմանը, տարբեր տիպի բառարաններից, համացանցից ևն օգտվելու և ինքնուրույն կերպով գիտելիքներ ձեռք բերելու հմտությունների մշակմանը: Ուսուցիչը միշտ պետք է հիշի, որ բոլոր աշակերտներին նույն տնային աշխատանքը հանձնարարելը ճիշտ չէ: Կարելի է այսպիսի առաջադրանքներ հանձնարարել՝

Որոշել ընդգծված բառերի ձևաբանական հատկանիշները:

1. **ա.** Երիտասարդը իշխանը միշտ հպարտացել էր իր այդ վեհ նպատակով: **բ.** Երիտասարդը գնաց քաղաք՝ ուսումը շարունակելու նպատակով:

2. **ա.** Տնքում էր հետո մեղեդին այդ որբ: **բ.** Տարիներ հետո ընկերները հանդիպեցին:

3. **ա.** Թատրոնի շքամուտքի մոտ ծնված շշուկը սողոսկեց ճեմասրահ:

բ. Չուներ մոտ ընկեր, որին վստահեր իր ցավերը:

4. **ա.** Ամպերի ընթացքը, ինչպես ուղտերի քարավան, դանդաղ էր, համաչափ ու միապաղաղ: **բ.** Արաքսը թավալվում էր երկու ափերի մեջ, ինչպես փակված առյուծն էր պատեպատ զարկվում:

5. **ա.** Սովորելը նույնն է, ինչ որ հոսանքին հակառակ լողալը. մի պահ կանգ առար, քեզ ետ կտանի: **բ.** Աղջիկը թախծոտ ժպտաց և հեռացավ հակառակ ուղղությամբ:

6. **ա.** Թող զսպանակված ամենամուտ լռությունը գա, թող չղջիկի պես ձայները լռեն: **բ.** Թող գիրքը խոժոռ, այս անգամ վեր կաց, շրջենք անձրևի օրորի ներքո:

7. **ա.** Բայց, ա՛խ, ո՞րն է իրավ, լո՛ւսին, ո՞րն է ոսկյա, ո՞րն է սին: **բ.** Դենքի՛ արյունալի մարտերից մնացած սպիները, իրավ, առնակա-նություն էին հաղորդում նրան:

8. **ա.** Բազմությունը սև ամպի մման լողում էր դեպի ներքև: **բ.** գյուղից ներքև կա մի աղբյուր:

9. **ա.** Հանգիստ դրեց գլխարկը, ապա վերցրեց ձեռնափայտը: **բ.** Եթե մեծը համառ է, ապա երկրորդը կատաղի է, երրորդը հանգիստ բնավորություն ունի:

10. **ա.** Միայն դու լսեցիր իմ խորհուրդները:

բ. Համաձայն եմ, միայն դու լսի՛ր ինձ:

♦ **Տրված բառերով կազմել նախադասություններ՝ ելնելով փակագծերում նշված խոսքիմասային իմաստներից:**

Ժամանակ (գոյական, կապ), **Ժանոթ** (գոյական, ածական), **մութ** (գոյական, ածական) **անկեղծ** (ածական, մակբայ), **բարձր** (ածա-

կան, մակբայ), **խելոք** (ածական, գոյական, մակբայ), **հանգիստ** (ածական. գոյական, մակբայ), **հեռու** (ածական, գոյական, մակբայ, կապ), **այլ** (դերանուն, շաղկապ), **զուգընթաց** (ածական, մակբայ, կապ), **նման** (ածական. կապ), **մինչև** (կապ, շաղկապ), **չնայած** (դերբայ. կապ, շաղկապ), **փոխանակ** (կապ, շաղկապ), **կարծես** (վերաբերական, շաղկապ, բայ), **մանավանդ** (մակբայ, վերաբերական):

♦ **Տրված բառաշարքում գտնել կրկնությամբ կազմված բառերը, դրանցից ընտրել և՛ ածականական, և՛ մակբայական արժեք ունեցողները և կազմել 2-ական նախադասություն:** Աղմուկ-աղաղակ, խումբ-խումբ, տեղի-անտեղի, քուլա-քուլա, ասել-խոսել, փոքր-ինչ, մեծ-մեծ, ինչ-որ, կաթիլ-կաթիլ, երկար-երկար, երկար-բարակ, գիշեր-ցերեկ, ոլոր-մոլոր, մանր-մունր, սուս-փուս, սեփ-սև:

♦ **Դուրս գրել այն բառերը, որոնք կարող են նաև այլ խոսքի մասային իմաստ(ներ)ով գործածվել:**

Ա. Խաղաղ երեկո: Արևն զգուշորեն հավաքում է իր փեշերը, հավաքում է շող առ շող, ճաճանչ առ ճաճանչ: Երկինքը հրդեհվել է տուն դարձող արևի շնչից, մեկտեղված շողերի խրձերից: Աշխարհը լուռ ու խաղաղ հետևում է արևի տունդարձին: Լռել է չարաճճի ճնճղուկների խմբերգը, կարկաչուն առուն պապանձվել է, երկնառաք լեռները փորձում են վերջ ի վերջո հասնել և մխրճվել կապույտի մեջ: Բայց արևը տեսնում է այդ և իր ճաճանչներից մի տրցակ մխրճում է ճերմակ կատարների մեջ, հրահանգում հանգիստ նստել: Գեղուղեշ ծառերը արձանացել են լուռ սպասման մեջ. նրանք մի քիչ վախեցած են: Աղբյուրն անվերջ ու անվերջ պատմում է իր դարավոր ու մեղրածոր հեքիաթը հեռու աշխարհների մասին: Ուշացած մի չարաճճի շող էլ լողաց հեռվում ու անհետացավ: Մութը զգույշ քայլ արեց, ապա մեղմ սահեց, տարածեց թևերն ու քնքուշ գզվեց ծառերին: Լույսը խաղաղ ընկրկեց, հաշտ ու անչար ծիկրակեց արևմուտքից, հետո հոգին ավանդեց մութ գիշերի ծովածավալ թևերին: Երեկոյի ծիածանագույն ստվերները սկսեցին թախծոտ ու տխուր քայլել տանիքների վրայով...

Բ. Ահագնացող փոթորկի ժամանակ ծովի մրրկահույզ, շառաչուն ալիքները խոյընթաց թռիչքներով սուրուն էին դեպի ափերը, իսկ արևազօծ օրերին սարսռազդու շառաչյունը փոխվում էր ախորժալուր խշշյունի և կապտականաչավուն ծովից փչող մեղմօրոր սյուքի յուրօրինակ շնկշնկոցով ու փայլվիլուն ջրերի ճողփյունով, թվում էր, մեղմ օրորում էր սեթևեթանքով նազող պչրուհուն, որը ծեծծեքուն հրապույրներով, անբարբառ հմայում էր մոլորված ճամփորդներին: Անդորր օրերին ժամանակը կարծես կանգ էր առնում, ծովը երփնե-րանգվում էր, և մեղմօրոր ծփացող կոհակները քաղցր փսփսուքով գաղտնիքներ էին ասում: Թվում էր՝ ծովն սպասում է իրեն հավերժ սիրահարված օվկիանոսի ալիքներին:

Պ. Անուշ անուրջով պաճուճի՜ր հոգիս,
Նստի՜ր մահճիս մոտ ու տխուր երգի՜ր
Սոր պես քնքշաբար մոտեցի՜ր դեմքիս,
Խաղաղ փայփայի՜ր սիրտս տարագիր:
Լայն դաշտերի մեջ դանդաղ մշուշուն
Լքված լռության ծածկոցն է իջել,
Իմ տխուր հոգուն երգերն են ննջել (Վ. Տերյան):

♦ Էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանի» օգնությամբ նշել *ախոյան, թճնամի, լուռ, մագաղաթագիր, ծաղկաբույր, էլ, այնուամենայնիվ, ուրախ, սուս* բառերի իմաստները և խոսքիմասային արժեքները:

Դասից հետո անհրաժեշտ է վերլուծել կատարված աշխատանքը և պարզել՝ իրագործվա՞ծ են նպատակները, ճի՞շտ էին ընտրված մեթոդները, ժամանակի բաշխումը որքանո՞վ էր իրատեսական, ի՞նչը կարելի էր ավելի ճիշտ կազմակերպել և ինչպե՞ս:

Ըստ «Ուսուցչի ուղեցույց տետր»-ում⁴² առաջարկված օրվա դասի պլանի նմուշի՝ ուսուցանվող նյութի դասապլանը այսպիսին կլինի՝

⁴² Վ. Գյուլազյան, Լ. Առուշանյան, Մ. Գասպարյան, Ուսուցչի ուղեցույց տետր, Երևան, 2009:

Օրվա դասի պլան

Ամիս, ամսաթիվ - - - - Դասի տևողությունը՝ 45 րոպե

Դասի թեման - - - Խոսքիմասային փոխանցումներ

----- **էջ** -----

**Դասի նպատակները (ա. ակադեմիական, բ. սոցիալական)
կամ ուսումնառության ակնկալվող արդյունքները ---**

* Ժամանակակից գրական հայերենին համապատասխան խոսք կառուցելը.

* լեզվական ճաշակի և խոսքի մշակույթի զարգացումը.

* տարբեր տիպի բառարաններից, տեղեկատու և օժանդակ ձեռնարկներից, համացանցից օգվելու և ինքնուրույն կերպով գիտելիքներ ձեռք բերելու հմտությունների մշակում.

* միջառարկայական կապերի ամրապնդումը և այլն:

Անհրաժեշտ պարագաներ--- բառատետր, աշխատանքային տետրեր, քարտեր, թերթիկներ...

Ցուցադրական նյութեր --- գծապատկերներ (գծագրական դասակարգիչներ), աղյուսակներ, դիագրամներ ...

Հիմնական հասկացություններ --- խոսքիմասային փոխանցում, գոյականացում, կապական բառեր, տարարժեքային բառեր....

Դասի ընթացքը. (տես՝ ուսուցման 2-րդ տարբերակը. էջ 57-60)

ա. Խթանման փուլի նկարագրությունը և տևողությունը.....

բ. Իմաստի ընկալման փուլի նկարագրությունը և տևողությունը


գ. Կշռադատման, գնահատման փուլի նկարագրությունը և տևողությունը

Տնային հանձնարարություն..... (տես՝ էջ 42-45)

Ուսուցիչների համար նախատեսված ձեռնարկներից մեկում⁴³ դասանյութի կառուցվածքը ներկայացված է այսպիսի գծապատկերով՝

⁴³ Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն., Ուսուցչի ձեռնարկ (Հայոց լեզու, 10-րդ դասարան), Երևան, 2010, էջ 6-7:

Տեսական մաս



Փորձենք ուսուցանվող նյութը ներկայացնել տրված կառուցվածքով: Արդեն ասվել է, որ «Տեսական մասում» ներկայացվում են հայոց լեզվի ծրագրով նախատեսված նյութին վերաբերող անհրաժեշտ տեսական կոնկրետ գիտելիքներ: Դպրոցական դասագրքերում սովորաբար նման բառերի մասին խոսվում է «Ածական», «Մակբայ» թեմաների վերջում, կապական և շաղկապական բառերի և վերաբերականների շրջանակներում:

«Հարցեր, վարժություններ, առաջադրանքներ» կառուցամասի առումով նորից չենք կարող հիմնվել դպրոցական դասագրքերի վրա: Բնականաբար կարևոր են դառնում գիտելիքների ստուգման, ամրապնդման, վերլուծական ունակությունները վերհանող, խոսք կազմելու և խոսքի մեջ իմացածը գործնականորեն կիրառելու շրջանակներում տրվող հարցերը. սրանց բովանդակային և ձևավորման՝ ձևակերպման խնդիրները մեծ մասամբ պայմանավորված են ուսուցչի գործոնով: Ինչպես ասում են՝ **եթե ուզում ես ճիշտ պատասխաններ լսել, ուրեմն ճիշտ հարցեր տուր...**

Վարժություններն ու առաջադրանքները քիչ են, եղածներն էլ պետք է հավաքել, խմբավորել և այլն: Բարդ կամ դժվար առաջադրանքները նախատեսված են ուսուցչի ուղղորդմամբ դասարանում կատարելու համար:

Խոսքիմասային տեղաշարժերի, փոխանցումների ուսուցման ընթացքում ևս վարժությունները և առաջադրանքները (**Վ և Ա**) կառելի է բաժանել ենթախմբերի՝

1. Գիտելիքների ամրապնդմանը նպաստող Վ և Ա:

2. Վերլուծական ունակությունները զարգացնող Վ և Ա (Աշակերտին մղում են սովորած փաստերը համադրելու, հակադրելու միջոցով վերլուծելու տրված նյութը և համապատասխան եզրակացություններ անելու: Հիմնականում կազմվում են **գտնել, ընդգծել, առանձնացնել, որոշել, դուրս գրել** և նման բառերով ձևակերպված կամ **այո-ոչ** պատասխաններն ակնկալող վարժություններ):

3. Գիտելիքի կիրառմանը նպաստող Վ և Ա. սրանք հիմնականում ձևավորվում են **գրել, կազմել, փոխել, գործածել նաև** և այլ բառերով. այս դեպքում աշակերտը ոչ թե կուտակող-հավաքող է, այլ ակտիվ գործածող:

4. Խոսքի զարգացմանը նպաստող Վ և Ա. սրանք եզրափակում են դասանյութին հաջորդող վարժությունների շարքը և ձևակերպվում են **կազմել նախադասություններ, կազմել կապակցված խոսք** և այլն:

Դասակառուցվածքի վերջին չորս բաղադրիչները հարակից են և նպատակ ունեն նյութը լրացնելու և ծրագրային պահանջների կատարմանը նպաստելու, միաժամանակ ավելի հետաքրքրական ու գրավիչ են դարձնում դասագիրքը, իսկ ուսուցման ընթացքը՝ հաճելի ու աշխույժ: «Բառարանագետի նոթատետրից» և «Ոճաբանի խոսքը» բաժինները տեսական-ծրագրային մասի բաղադրիչներն են՝ մատուցման յուրահատուկ եղանակով, իսկ «Ձրուցարանը» և «Հարցասերի և Լեզվագետի զրույցները» տեսական և գործնական առումներով օժանդակում են գիտելիքի լիարժեք յուրացմանը: Բնականաբար սրանց նպատակային կիրառումը պայմանավորված է մի կողմից ուսուցչի վարպետությամբ, մյուս կողմից՝ աշակերտների պատրաստվածությամբ:

Ուսումնաստվության ընթացքում կիրառելի են նյութի մատուցման և՛ տեքստային, և՛ գիտելիքների պատկերային մատուցման եղանակները, այլ կերպ ասած, ուսումնադիտողական լրացուցիչ նյութերը: Ուսումնաստվության ընթացքում տեսական-գործնական նշանակություն ունեն տարատեսակ գրաֆիկական պատկերները, աղյուսակներն ու գծապատկերները: Սրանց միջոցով ներկայացված

նյութը լեզվական շղթայում ավելի տեսանելի է դառնում, ավելի որոշակիորեն են ընդգծվում տարբեր արժեքների միջև եղած կապը, հարաբերությունը: Սրանք դասին գործնական բնույթ են տալիս, նպաստում գիտելիքների ամրապնդմանը, տարբեր հմտությունների զարգացմանը, օգնում են մասնավոր օրինակների հիման վրա ընդհանրացումներ կատարելու, լեզվական միավորների և երևույթների միջև կապը ճիշտ պատկերացնելու, խոսքը պատկերի վերածելու և հակառակը՝ գծապատկերը՝ խոսքի, կամ գծապատկերը խոսեցնելու, կարդալու, խոսք կառուցելու հմտությունների զարգացմանը. գծապատկերները խոսում են և խոսեցնում, հուշում են և ուղղորդում: Այս թեմայի ուսուցումը պատկերային մատուցման լայն հնարավորություններ է ընձեռում: Տեքստային և պատկերային ուսուցման համատեղումը, ըստ Բենջամին Բլումի, կզարգացնեն սովորողների կարողությունները՝ **գիտելիք-ընկալում - կիրառում-վերլուծում-համադրում-գնահատում**:

«Խոսքիմասային տեղաշարժեր և փոխանցումներ» թեման կարելի է ուսուցանել տարբեր եղանակներով: Բնականաբար ամենատարածվածը ավանդական՝ խառը կան համակցված դասի ձևով ուսուցումն է. ուսուցչի և սովորողների փոխազդեցության ձևերից կիրառվում է ուսուցման կրավորական (պասսիվ) մեթոդը. դասի ընթացքում ուսուցիչը հիմնական գործող անձն է, իսկ աշակերտները նրա հրահանգներին ենթակա ունկնդիրներ են... Հին դասի հարցումից հետո ուսուցիչը բացատրում է նոր դասը, ստուգիչ և ամրապնդող վարժություններ կատարում, ամփոփում և տնային հանձնարարություններ տալիս: Ժամանակակից դպրոցում ուսուցման այս մեթոդը արդյունավետ չէ, թեպետև ունի որոշ դրական կողմեր (ուսուցիչը հեշտությամբ է պատրաստվում դասին, սահմանափակ ժամանակահատվածում համենամտաբար ծավալում նյութ է հաղորդում և այլն):

Թեման կարելի է ուսուցանել նաև ուսումնական գործունեության տարբեր նախագծային տեսակներով: Առաջնորդվելով աշակերտների կամ ուսանողների ինքնուրույն հետազոտական կամ անհատական ստեղծագործական աշխատանքի խթանման սկզբունքով՝ գիտելիքնե-

րի հաղորդումը կարելի է կատարել մաս հետևյալ եղանակներով՝

Ա. Սովորողների ինքնուրույն հետազոտական աշխատանքի խթանում. Ուսուցիչը տրամադրում է փաթեթ կամ որոշում է դասագրքի այն հատվածները, որոնք տեսական գիտելիքներ են պարունակում: Աշակերտներն ինքնուրույն ուսումնասիրում և սովորում են տեսական նյութը, ապա կիրառվում է «**Ձնակույտ**» կամ «**Ձնագնդի**» համագործակցային աշխատանքի ծևը:

Այնուհետև զույգեր են ընտրվում: Թեման ինքնուրույն ուսումնասիրելուց հետո յուրաքանչյուր աշակերտ իր զույգի հետ քննարկում է սովորած տեսական նյութը: Դրանից հետո զույգերը միանում են ուրիշ զույգի և քառյակով քննարկում են: Ժամանակը լրանալուց հետո խոսնակը քառյակի ուսումնասիրած նյութը ներկայացնում է դասարանի ուշադրությանը:

Բ. Սովորողները սովորեցնողի դերում. սովորեցնել ընկերոջը և ընկերոջից սովորել.

Ուսուցման գործընթացում փոխազդեցությունն իրականացվում է համագործակցային կամ փոխներգործուն (ինտերակտիվ) մեթոդներով. այս դեպքում ենթադրվում է աշակերտների ավելի ընդգրկումն փոխազդեցություն ոչ միայն ուսուցչի, այլև միմյանց միջև, ինչպես մաս աշակերտների գործուն մասնակցության գերակայություն: Ուսուցիչն իր առջև դրված նպատակներն իրագործում է աշակերտների գործունեությունն ուղղորդելու ճանապարհով, մշակում է և՛ դասի պլանը, և՛ դասընթացի յուրաքանչյուր քայլը: Նախօրոք թեման բաժանում է որոշակի հատվածների, դասարանում դրանք ցուցակով հանձնարարում է աշակերտներին, տալիս է ժամանակ, և յուրաքանչյուրը պիտի ինքնուրույն սովորի իրեն բաժին հասած նյութը, կազմի առաջադրանքներ և վարժություններ: Ժամանակը լրանալուց հետո յուրաքանչյուր աշակերտ իր կողքին բացատրում և սովորեցնում է իր սովորածը, վերջինս նույնատիպ աշխատանք է կատարում՝ սովորեցնելով արդեն իր սովորածը: Այնուհետև համատեղ աշխատանք են կատարում, համեմատում, քննարկում, վերլուծում, խմբագրում: Այս դեպքում կարևորվում են փոխուսուցումը, փոխստուգումն ու փոխգնահատումը:

Գ. Առանձին աշակերտի (աշակերտների) ստեղծագործական աշխատանք. Որպես ուսուցչի և աշակերտների փոխազդեցության ձև՝ կիրառվում է ուսուցման գործուն (ակտիվ) մեթոդը. այս դեպքում ուսուցման գործընթացի մասնակիցները հավասար իրավունքներ ունեն: Նոր նյութի հաղորդումը կարելի է վստահել մեկ կամ երկու աշակերտի. ուսուցչի ղեկավարությամբ նրանք պատրաստվում են նախօրոք, կազմում իրենց աշխատանքի պլանը, ուսումնաօժանդակ նյութեր՝ գծապատկերներ, աղյուսակներ, առաջադրանքների և վարժությունների թերթիկներ: Տեսական նյութի մատուցումը կատարվում է ավանդական-վերատադրողական եղանակով, բայց նյութը բացատրում են աշակերտները: Հետո սկսվում է ինքնուրույն աշխատանք թերթիկներով, որի ընթացքում ուսուցիչը և օգնական աշակերտները շրջում են դասարանում և անհրաժեշտության դեպքում օգնում սովորողներին՝ կատարելու տրված առաջադրանքները:

Ստորև առաջարկում ենք նյութի ուսուցման մի քանի տարբերակներ:

3. 2. 2. Ուսուցման տարբերակներ ՏԱՐԲԵՐԱԿ 1.

Երկխոսքի մասային բառերի ուսուցումը կարելի է անցկացնել և՛ դասախոսության, և՛ զրույցի միջոցով: Նախընտրելի է զրույցի եղանակը: Որպես ուսուցման գործընթացի կազմակերպման ձև՝ կիրառելի են նաև ինդուկտիվ (մասնավորից դեպի ընդհանուր՝ մակածում) և դեդուկտիվ (ընդհանուրից դեպի մասնավոր՝ արտածում) մեթոդները: Տրամաբանական է, որ ուսումնական գործունեության արդյունքում աշակերտները տարբերակում են խոսքի մասերը՝ որպես բառապաշարի իմաստաբերականական խմբեր, գիտակցում են սպասարկու խոսքի մասերի դերը խոսքի կառուցման մեջ, գաղափար ունեն խոսքի մեջ բառերի կրած փոփոխությունների և դրանց միջոցով զանազան հարաբերություններ արտահայտելու մասին, հետևելով գրական նորմին՝ դրանք ճիշտ են գործածում: Ուսումնական նման նպատակների իրագործման հողի վրա ուսուցիչը հարցերի և ակնկալվող պատասխանների միջոցով ներկայացնում է ուսուցանվող նյութը:

Ուս. (Ուսուցիչ) - Որո՞նք են հայերենի խոսքի մասերը:

Աշ. (Աշակերտ) - Հայերենի խոսքի մասերն են՝ գոյական, ածական, թվական, դերանուն, բայ, մակբայ, կապ, շաղկապ, ծայնարկություն, վերաբերական:

Ուս. - Ի՞նչ կարող եք ասել խոսքի մասերի դասակարգման մասին:

Աշ. 1. - Խոսքի մասերը լինում են փոփոխվող (թեքվող) և անփոփոխ (չթեքվող), լինում են նաև նյութական իմաստ ունեցող կամ անվանողական խոսքի մասեր, քերականական իմաստ ունեցող կամ սպասարկու խոսքի մասեր և վերաբերմունքային խոսքի մասեր:

ԱՇ. 2. - Գոյականը, ածականը, թվականը, դերանունը, բայը, մակբայը նյութական խոսքի մասեր են, կապերի ու շաղկապների դերը շարահյուսական է, իսկ վերաբերականներն ու ծայնարկությունները արտահայտում են խոսողի դատողական և զգացական վերաբերմունքը:

Ուս. - «Ածական» թեման անցնելիս նշեցինք, որ կան մի շարք ածա-

կաններ, որոնք կարող են նաև առարկա ցույց տալ և հանդես գալ իբրև գոյական, և հակառակը: (Ուսուցիչը ինքն է ասում մի քանի բառեր և պահանջում կազմել նախադասություններ՝ տարբեր քերականական կան իմաստներով՝ արժեքներով, այնուհետև աշակերտները շարունակում են...): Նշանակում է՝ կան բառեր, որոնք տարբեր գործածություններում կարող են տարբեր խոսքի մասերի իմաստով հանդես գալ: Ուրիշ ո՞ր խոսքի մասերն անցնելիս ենք նման երևույթի հանդիպել:

Աշ. 1. - «Կապ» խոսքի մասն անցնելիս սովորել ենք կապական բառերը. կան գոյականներ (**Ժամանակ, նպատակ, ձեռք...**), ածականներ (**նման, հավասար...**), մակբայներ (**հեռու, վերև...**), որոնք նաև կապի դերով կարող են հանդես գալ:

Աշ. 2. - Կան մի քանի բառեր, որոնք և՛ շաղկապներ են, և՛ կապեր (**չնայած, փոխանակ...**):

Աշ. 3. - Վերաբերականները այլ խոսքի մասերից են առաջացել և այսօր էլ ներառում են բառեր, որոնք միաժամանակ այլ խոսքի մասեր են (**տես, կարծես, արի, անկասկած և այլն**):

Ուս. - Այո, վերաբերականներն հիմնականում առաջացել և առաջանում են նյութական իմաստ ունեցող բառերի իմաստային մթազնման և նոր՝ վերաբերմունքային նրբերանգ ձեռք բերելու հետևանքով (աստիճանաբար), ըստ որում այլ խոսքի մասերի և վերաբերականների տարբերակման հարցում մեծ դեր ունեն հնչերանգը և շարադասությունը: Իսկ հիմա ձեր թվարկած բառերից ընտրե՞ք մի քանիսը և խոսքիմասային տարբեր իմաստներով կազմե՞ք նախադասություններ:

Աշ. 1., Աշ. 2., Աշ. 3 - (Կազմում են նախադասություններ **Ժամանակ, նման, վերև** և այլ բառերով):

Ուս. - Կան բառեր, որոնք կարող են 3, նաև 4 խոսքիմասային իմաստներ ունենալ. իհարկե, սրանք քանակապես քիչ են: Այսպես, ի՞նչ խոսքիմասային իմաստ ունի **հեռու** բառը գրատախտակին գրված յուրաքանչյուր նախադասությունում՝ **1. Հեռու** տեղերից եկածները հավաքվեցին եկեղեցու բակում: **2. Նա** գնաց **հեռու**: **3. Նոր** ծագող արևի շողերի ներքո գծագրվեց **հեռուն**: **4. Գյուղից հեռու** կար մի աղբյուր:

Աշ. 1. - Առաջին նախադասության մեջ **հեռու**-ն ածական է:

Աշ. 2. - Երկրորդ նախադասության մեջ այն մակբայ է:

Աշ. 3. - Երրորդում գոյական է:

Աշ. 4. - Զորորդում կապ է (կապական բառ):

Ուս. - Ծիշտ է՝ **հեռու** բառը տարբեր կիրառություններում տարբեր խոսքիմասային իմաստով է հանդես եկել. նշանակում է՝ կիրառություններից դուրս այն և՛ գոյական է, և՛ ածական, և՛ մակբայ, և՛ կապ: Այժմ կազմենք նախադասություններ 3 խոսքիմասային իմաստ ունեցող **հայերեն** բառով, ըստ որում աշակերտներից մեկը կազմում է նախադասություններ, մյուսը՝ նշում խոսքիմասային արժեքը:

Աշ. 1. - **ա. Հայերենը** աշխարհի հնագույն լեզուներից է: **բ. Հայերեն** մատյանները օտարազգի հայագետների համար կարևոր աղբյուրներ են: **գ.** Նրանք փորձում էին խոսել **հայերեն**:

Աշ. 2. - Առաջին նախադասության մեջ **հայերեն** բառը գոյական է, երկրորդի մեջ՝ ածական, երրորդում՝ մակբայ: (Եվ այսպես կարելի է շարունակել **անդորր**, **սուտ** և այլ բառերով):

Ուս. - Շատ կարևոր է հիշել, որ ձևաբանական և շարահյուսական վերլուծությունների ժամանակ պետք է նշել այդ բառերի խոսքիմասային այն հատկանիշներն ու շարահյուսական այն կիրառությունը, որ ունեն տրված նախադասություններում:

Այժմ հարց ու պատասխանի միջոցով ստուգենք, ամփոփենք՝ **ի՛նչ գիտեիք, ի՛նչ սովորեցիք, ի՛նչը մնաց անհասկանալի...**

Աշ. - Մենք գիտեինք, որ հայերենն ունի 10 խոսքի մաս, և ամեն մի բառ մտնում է մի խոսքի մասի մեջ: Սովորեցինք՝ որ խոսքի մասերը քարացած չեն, և կարող են տեղի ունենալ տեղաշարժեր, փոխանցումներ, մի բառը մի խոսքի մասից կարող է անցնել այլ խոսքի մասի: Փոխանցման ընթացքում կան բառեր, որոնք տարբեր խոսքի մասերի իմաստներով կարող են հանդես գալ, այսինքն՝ լինել և՛ ածական, և՛ գոյական, և՛ գոյական, և՛ կապ...: (**Բնականաբար ուսուցիչը գիտի՝ հարցերից «անհասկանալին», «դժվարը», «կասկածելին» խոսքիմասային մասնակի փոխանցումների հետ են կապված, և աշխատանքը շարունակում է այս ուղղությամբ՝ հաշվի առնելով ծրագրային պահանջը, դասագրքի նյու-**

թը, աշակերտների տարիքը և այլն):

Ուս. - Այսպես՝ ի՞նչ եք հասկանում, երբ ասում ենք՝ **գինվորական** բառը և՛ գոյական է, և՛ ածական:

Աշ. - Եթե գոյական է, ապա ցույց է տալիս առարկա և պատասխանում է **ո՞վ** հարցին, ունի գոյականին բնորոշ իմաստաբերականական հատկանիշներ. եթե ածական է, ապա ցույց է տալիս առարկայի հատկանիշ և պատասխանում է **ինչպիսի՞** հարցին:

Ուս. - Նույն բառն օգտագործեք նախադասությունների մեջ տարբեր խոսքիմասային նշանակությամբ:

Աշ. 1. - **Դարպասի մոտ կանգնած էր մի գինվորական:**

Աշ. 2. - **Դարպասին մոտեցողը գինվորական հագուստով էր:**

Ուս. - Թող բառը և՛ բայ է, և՛ վերաբերական. սա ի՞նչ է նշանակում:

Աշ. - Եթե բայ է, ապա ունի բային բնորոշ հատկանիշներ, իսկ եթե վերաբերական է, չի թեքվում, և միայն իմաստային երանգը կարող ենք նշել՝ զիջական:

Ուս. - «**Չազար շեփոր թող հնչի այս առավոտ»** և «**Թո՛ղ գիրքդ և գնա՛**» նախադասությունների մեջ նշեք **թող**-ի ձևաբանական հատկանիշները:

Աշ. 1. - Առաջին նախադասության մեջ **թող**-ը զիջական վերաբերական է:

Աշ. 2. - 2-րդ նախադասության մեջ **թող**-ը բայ է և ունի հետևյալ ձևաբանական հատկանիշները՝ դիմավոր, ածանցավոր, անկանոն, հրամայական եղ, եզ. թիվ, 2-րդ դեմք...

Ուս. - (Ամփոփում է) Ինչպես ուրիշ լեզուներում, այնպես էլ հայերենում տեղի են ունենում խոսքիմասային տեղաշարժեր, փոխանցումներ, լիակատար փոխանցումների արդյունքում շատ ածականներ այսօր գոյականներ են, շատ գոյականներ ածականներ են դարձել, վերաբերականներ, մակբայներ, կապեր, շատ բայեր՝ գոյականներ, ածականներ, վերաբերականներ և այլն: Մյուս կողմից օրինաչափական է, որ մասնակի փոխանցումների դեպքում միևնույն բառը բնորոշվում է հին ու նոր խոսքիմասային հատկանիշներով: Ուրեմն՝ խոսքիմասային համակարգում կա մի բառախումբ, որի մեջ

մտնող բառերի քերականական իմաստը երկփեղկված է, և միայն գործածությամբ կարող ենք որոշել այդպիսի բառերի խոսքիմասային պատկանելությունը: Սրանք տարբեր անուններ ունեն՝ **երկխոսքիմասային բառեր, տարարժեք բառեր, իմաստաարժեքային զուգաձևություններ**, և խոսքիմասային տեղաշարժերի վկայություններ են:

ՏԱՐԲԵՐԱԿ 2.

Ուսուցման ընթացքում նախատեսվում է կիրառել **ԽԻԿ** համակարգը:

Դասի բուն ընթացքը ներկայացվում է հետևյալ փուլերով՝

1. Խթանում (Խ)

2. Իմաստի ընկալում (Ի)


3. Կշռադատում (Կ)

1. Խթանման փուլի նկարագրությունը: Նախապատրաստել աշակերտներին՝ հիշեցնելով այն խոսքի մասերը, որոնց շրջանակներում կան նմանատիպ բառեր, բացահայտել հաղորդվելիք նյութի վերաբերյալ նրանց գիտելիքները, ձևավորել գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու ձգտում:

Դասը կարելի է սկսել «**մտազրոհի**» մեթոդով. սա անվանվում է նաև «**մտքերի տարափ**», «**ուղեղային գրոհ**» և կիրառվում է առանձնապես դասի սկզբում (5-10 րոպե): Ուսուցչի հիշեցումից հետո աշակերտներն անմիջապես թվարկում են նմանատիպ բառեր, վերհիշում են այն խոսքի մասերը, որոնց միջև նկատվում են տեղաշարժեր: Ուսուցչի դերը ուղղորդելն է, երեխաներին ուշադիր լսելը և մտքերի հոսքը խրախուսելն է: Այս փուլում վերլուծության անհրաժեշտություն չկա, քանի որ պահանջվում է սոսկ նյութին վերաբերող մտքեր արտահայտել և գրանցել:

2. Իմաստի ընկալման փուլի նկարագրությունը: Այս փուլում անհրաժեշտ է պահպանել աշակերտների հետաքրքրությունը, շաղկապել հին ու նոր տեղեկությունները և գիտելիքների նոր կառույց ձևավորել: Նպատակահարմար է օգտվել **գաղափարների քարտեզագրումից, բանավեճից, գրույցից** և այլն: Ուսուցիչն անուղղակի կերպով աշակերտներին տանում է խթանման փուլում առաջադրված և առաջացած հարցերի պատասխանները գտնելու ճանապարհով: Նա հաղորդում է, որ մի շարք բառեր ունեն խոսքիմասային երկու և ավելի արժեքներ, և սրանով հակադրվում են խոսքիմասային մեկ իմաստ ունեցող բառերին: Այսպիսի դեպքերում գործ ունենք խոսքիմասային տեղաշարժերի հետ, իսկ նման բառերը

տարբեր անուններ ունեն. ընդունված է դրանք անվանել **տարար-
ժեք բառեր**: Այնուհետև գրատախտակին գծում է իրար հատվող եր-
կու շրջաններ և հատման էլիպսաձև մասում գրում է այնպիսի բառ,
որ և՛ գոյականական, և՛ ածականական արժեքներ ունի: Երկրոր-
դում՝ և՛ ածականական, և՛ մակբայական, երրորդում՝ և՛ կապական,
և՛ գոյականական և այլն:



Ապա առաջարկում է մտածել և «խոսեցնել» գծապատկերները:
Աշակերտները կռահում են, որ այդ բառերի խոսքիմասային արժեքը
երկատված է, որ նույն բառերը ոչ թե մեկ, այլ երկու խոսքի մասի
նշանակություն ունեն, նշում են այն հատկանիշները, որոնք բնորոշ
են տվյալ բառերին տարբեր խոսքիմասային արժեքների դեպքում,
ապա համապատասխան արժեքներով կազմում են նախադասու-
թյուններ: Իմաստավորման փուլում ուսուցիչը կարող է կիրառել
«մտքերի արծանագրում» մեթոդական հմարը. աշակերտները
հայտնում են իրենց կարծիքները, խմբավորում, եզրակացնում:

Կշռադատման փուլի նկարագրությունը: Կշռադատման փու-
լում կարևոր է հասկանալ՝ **ի՞նչ գիտեին և ի՞նչ սովորեցին**: Հանձ-
նարարելի են հետևյալ մեթոդները՝ **քառաբաժան, խորանարդում,
երեք բանալի մեկ կողպեք** և այլն:

Փոխներգործուն նշանների համակարգը կիրառվում է նոր նյութը
խորությամբ յուրացնելու համար: Ուսուցիչն առաջարկում է լրացնել
նախապես պատրաստված աղյուսակը՝ կիրառելով նշանները՝ 0, +,
-, °, ~ (նշանների նշանակությունները պետք է աշակերտներին հայտ-
նի լինի).

0 աշակերտն այս նշանը դնում է այն մտքի դիմաց, որը հաստա-
տում է իր իմացածը.

+ այն մտքի դիմաց, որն իր համար նորություն է պարունակում.

- այն մտքի դիմաց, որը հակասում է իր իմացածին.

° այն մտքի դիմաց, որի պարունակած տեղեկատվությունը հասկանալի չէ, և որի մասին ինքն ավելին կուզենար իմանալ.

˘ այն մտքի դիմաց, որն իրեն զարմանք է պատճառել:

Սա բավական լուրջ գործընթաց է, որի ժամանակ աշակերտը պայմանական նշանների օգնությամբ իր գիտելիքներն է դրսևորում, համաձայնությունը կամ անհամաձայնությունն է արտահայտում. զարմանում է, կասկածում, մատնանշում մոր գիտելիքի ձեռքբերումը: Նպաստում է ինքնաստուգման ու ինքնագնահատման կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը:

Միտքը	պայմ. նշանը
Յուրաքանչյուր բառ մտնում է որևէ խոսքիմասային խմբի մեջ:	
Մի բառը կարող է 2 խոսքիմասային պատկանելություն ունենա:	
Խոսքի մասերը կայուն համակարգ չեն. տեղի են ունենում խոսքիմասային տեղաշարժեր և փոխանցումներ:	
Բառը կարող է նաև 3, 4 խոսքիմասային իմաստ ունենալ:	
Հայերենն ունի բառերի մի մեծ խումբ, որոնք երկխոսքիմասային արժեք ունեն կամ տարարժեք բառեր են:	

Կարելի է կիրառել «**կողմ-դեմ**»-ի աղյուսակը. սա երկակի պատասխան արտահայտող արծագանքների (այո / ոչ, կողմ / դեմ) գրառման համար է. նպաստում է աշակերտի ինքնուրույն մտածողության զարգացմանը, սեփական կարծիքն արտահայտելու կարողության ձևավորմանը:

Ածականը, բայի հետ գործածվելով, դառնում է մակբայ:	Ածականը, բայի հետ գործածվելով, խոսքիմասային արժեքը չի փոխում:
Կարծես, ասես, արի, թող բառերը բայեր են և ունեն բային բնորոշ ձևաբանական հատկանիշներ:	Կարծես, ասես, արի, թող բայերը որպես վերաբերական գործածվելիս պահպանում են բայական հատկանիշները:
Մակբայը, առարկա ցույց տվող բառի հետ գործածվելով, դառնում է ածական:	Մակբայը, առարկա ցույց տվող բառի հետ գործածվելով, խոսքիմասային արժեքը չի փոխում:

Կշռադատման փուլի կարևոր բաղադրիչ է ամփոփումը կամ անդրադարձը. աշակերտը վերհիշում է ուսուցչի ուղղորդիչ, նպատակային քայլերը, իր կատարած աշխատանքը, համակցում հին ու նոր գիտելիքները:

Օգտակար է «**Մտածի՛ր - զո՛ւյգ կազմիր - մտքեր փոխանակի՛ր**» մեթոդական հմարի կիրառումը: Մտքերի փոխանակման արդյունքում համապատասխան եզրակացություններ են արվում: Այս փուլում ցանկալի է տալ այնպիսի առաջադրանքներ և վարժություններ, որոնք կատարելիս աշակերտը **կուտակողից ակտիվ գործածող է դառնում**: Օրինակ՝ 7-րդ դասարանի համար նախատեսված դասագրքում Հավելված 3»-ի «Ուղղագրական-ձևակազմական բառացանկում» բառերի կողքին կան խոսքիմասային արժեքների հղումներ. պահանջել աշակերտներից դուրս գրել նման բառերը և կազմել բառակապակցություններ, նախադասություններ:

ՏԱՐԲԵՐԱԿ 3.

«խոսքիմասային փոխանցումներ»-ն ուսուցանելիս ուսուցիչն իր առջև դրված նպատակներին կարող է հասնել համագործակցային դասի միջոցով փոխներգործուն մեթոդներով: Դասի պլանն իրենից ներկայացնում է տրամաբանորեն իրար հաջորդող փոխներգործուն վարժությունների ու առաջադրանքների շարք:

Ուսումնական գործընթացի տեսակը խմբային գործունեությունն է. խմբի հաջողությունը կախված է բոլոր անդամների ներդրումից, և յուրաքանչյուրը պետք է դրսևորի ինքնուրույնություն, նախաձեռնություն, կարողանա իր հավաքած, իր սովորած տեղեկությունները հաղորդել ընկերներին, միաժամանակ կարողանա լսել, հասկանալ և մտածված պատասխան տալ՝ դրսևորելով հաղորդակցային, համագործակցական և հանդուրժողական որակներ:

Խմբային աշխատանքի ընթացքը.

1. Դասարանը բաժանել 4-5 աշակերտներից բաղկացած խմբերի:

2. Հանգամանալից ներկայացնել առաջադրանքն այնպես, որ աշակերտներն ըմբռնեն՝ թեպետև բառերի մեծ մասն ունի մեկ խոսքիմասային իմաստ, բայց կան մի շարք բառեր, որոնց քերականական իմաստը երկատված է: Յուրաքանչյուր խմբին տրվում են 4-7 բառ՝ խոսքիմասային հղումներով, մի դեպքում դրանք համատեղում են և՛ գոյականական, և՛ ածականական իմաստներ (օրինակ՝ **զառիթափ, հերթապահ, երկրապահ, կենդանագիր, մագաղաթագիր**), մյուս դեպքում՝ դերբայական և ածականական կամ գոյականական իմաստներ (**համակարգող, նախագծող, առաջնորդող, կոտորած, հարբած, լքված**), երրորդ դեպքում՝ ածականական և մակբայական իմաստներ (**զգույշ, խաղաղ, դանդաղ, շեշտակի, զայրագին**), չորրորդ և հինգերորդ դեպքերում՝ համապատասխանաբար կապական և շաղկապական (**փոխանակ, չնայած, մինչև**), բայական և եղանակավորող իմաստներ (**ասես, արի, տես, թող**) և այլն: Վերջին խմբում կարելի է ընդգրկել առավել ուժեղ աշակերտներին և տալ այնպիսի բառեր, որոնք և՛ գոյական են, և՛ ածական, և՛ մակբայ (**Ֆրանսերեն, սուտ, անդորր**), մակբայ են, շաղկապ, վերաբե-

րական (**էլ, ապա**) կամ համատեղում են գոյականական, ածականական, մակբայական, կապական նշանակությունները (**հեռու**) և այլն: Պահանջվում է գրել նախադասություններ, որոշել տրված բայերի ձևաբանական հատկանիշները: Վերջում կազմել Վենի գծապատկերը (դիագրամը) կամ աղյուսակներ՝ երկխոսքի մասայինի դեպքում՝ **T**-ածն աղյուսակ. սա գծագրական դասակարգիչներից ամենապարզն է. տառը հուշում է, որ աղյուսակը կազմված է 2 մասից՝ թևից, որտեղ գրանցված են խնդրի 2 հակադիր որակները, եռախոսքի մասայինի դեպքում՝ **M**-ածն աղյուսակ. այս դեպքում երեք սյուն է:

3. Հանձնարարել խմբին աշխատանքի բաժանում կատարել՝ ընտրելով ներխմբային քննարկումները վարող, դրանք գրանցող և խմբի տեսակետները ամբողջ դասարանին ներկայացնող աշակերտներ՝ խոսնակներ:

4. Խմբերի համար սահմանել քննարկումներին հատկացվող որոշակի ժամաքանակ:

5. Յուրաքանչյուր խմբին հնարավորություն տալ ամփոփող ձևով ներկայացնելու քննարկումների արդյունքները. դրանք սովորաբար ներկայացնում է խմբի խոսնակը:

6. Գտնել ընդհանրություններ խմբերի տեսակետների միջև (ընդհանրությունն այն է, որ սրանք երկխոսքի մասային արժեք ունեն):

7. Ամփոփել՝ ինչ սովորեցին և ինչպես կօգտագործեն իրենց ձեռք բերած գիտելիքները:

Կարելի է օգտագործել ԳՈՒՄ -աղյուսակը. երեք սյունակից է բաղկացած՝ **1. ի՞նչ գիտենք 2. ի՞նչ հարցեր ունենք** (երկրորդ սյունակի համար) **3. ի՞նչ սովորեցինք:**

Խոսքի մասային տեղաշարժեր և փոխանցումներ		
Գիտեն	Ուզում եմ իմանալ	Սովորել եմ

Կամ հետևյալ աղյուսակը (ըստ որում կարելի է աստիճանաբար վանդակները չլրացնել՝ թողնելով՝ որ աշակերտներն անեն):

օրինակներ	հարց	նախադասության անդամ
1. Նման պատասխան ես չեի լսել: 2. Ժպտում ես արևի նման:	1. ինչպիսի՞ 2. Առանձին հարցի չի պատասխանում:	1. որոշիչ 2. Նախադասության անդամ է կապվող բառի հետ:
1. Նա լավ մարդ է: 2. Աշակերտը լավ պատասխանեց: 3. Լավ, ես կգամ:	1. ինչպիսի՞ 2. ինչպե՞ս 3. Վերաբերական է և հարց չի ընդունում:	1. որոշիչ 2. ձևի պարագա 3. Նախադասության անդամ չի դառնում:
1. Որոշ աշակերտները դպրոց են գալիս իմիջի-այլոց: 2. Արամը, իմիջիայլոց, շատ բարի է:	1. ինչպե՞ս 2. Վերաբերականին հարց չի տրվում:	
1. Անդորր լռության մեջ նիրհում են դաշտերը: 2. Անդորր մնջում են ծաղիկները: 3. Գիշերային անդորրը պարուրեց հոգին:		

ՀԱՆՁՆԱՐԱՐՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբրահամյան Ս. Գ., Պառնասյան Ն. Ա., Օհանյան Հ. Ա., Ժամանակակից հայոց լեզու, հատոր 2, Երևան, 1974:
2. Աբեղյան Ս., Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965:
3. Ալեքսանյան Թ., Խոսքի ուսուցումը միջին դպրոցում, Երևան, 2012:
4. Աղայան Է. Բ., Բարսեղյան Հ. Խ., Հայոց լեզու (դասագիրք 5-7-րդ դասարանների համար), Երևան, 1965.... 1994 թ.թ.:
5. Ասատրյան Ս. Ե. , Ժամանակակից հայոց լեզու , Երևան, 2002:
6. Ավագյան Վ. Գ., Եղանակավորող բառերը և նրանց ուսուցումը, Երևան, 1975:
7. Ավետիսյան Յու., Զաքարյան Հ., Զևաբանություն, Երևան, 2008:
8. Ավետիսյան Յու., Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Գիրք Ա, Երևան, 2014:
9. Բարսեղյան Հ., Մեյթիխանյան Փ., Հայոց լեզու, 7, Երևան, 2011:
10. Բարսեղյան Հ., Մեյթիխանյան Փ., Հայոց լեզու, 8, Երևան, 2012:
11. Բեդիրյան Պ., Մայրենիի ուսուցման հարցեր, Երևան, 1982:
12. Գյուլագյան Վ., Առուշանյան Լ., Գասպարյան Ս., Ուսուցչի ուղեցույց տետր, Օրվա դասի պլան, Երևան, 2009:
13. Գյուլամիրյան Զ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, 2006:
14. Գյուլբուդաղյան Ս. Վ., Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Երևան, 1987:
15. Գյուրջինյան Դ., Ալեքսանյան Թ., Գալստյան Ա., Ուսուցչի ձեռնարկ, Մայրենի, 5-րդ և 6-րդ դասարաններ, Երևան, 2006:
16. Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն., Մայրենի 3, Մեթոդական ուղեցույց, Երևան, 2008:
17. Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն., Մայրենի 4, Մեթոդական ուղեցույց, Երևան, 2009:
18. Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն., Ուսուցչի ձեռնարկ, Հայոց լեզու, 10-րդ դասարան /ավագ դպրոցի հումանիտար հոսք/, Երևան, 2010:

19. Գրիգորյան Ա., Հայոց լեզու, Դասագիրք միջնակարգ դպրոցի 8-10-րդ դասարանների համար, Երևան, 1953:

20. Գրիգորյան Ա., Հայոց լեզվի դասագիրք, ութամյա դպրոցի V-VII դասարանների համար, Երևան, 1963:

21. Ժամանակակից դասը դպրոցում, Մեթոդական ժողովածու, Երևան, 1974:

22. Խլղաթյան Ֆ. Հ., Ժամանակակից հայոց լեզու. Ձևաբանություն, Երևան, 2007:

23. Խլղաթյան Ֆ., Հայոց լեզու, 5, Երևան, 2000:

24. Խլղաթյան Ֆ., Հայոց լեզու, Ուսուցչի ձեռնարկ, 7-9-րդ դասարաններ, Երևան, 2006:

25. Հայոց լեզվի դասավանդման հարցեր, ժողովածու, Երևան, 1958:

26. Հայոց լեզու. գրականություն, Հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր, Երևան, 2006:

27. Ղարիբյան Ա. Ս., Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Երևան, 1654:

28. Ղարիբյան Ա., Հայոց լեզու, դասագիրք V-VII դասարանների համար, Երևան, 1960 թ..

29. Մարգարյան Ալ., Հայոց լեզվի քերականություն, Ձևաբանություն, Երևան, 2004:

30. Միրումյան Մ. Վ., Հայոց լեզու, (Տեսական և գործնական դասընթաց), Երևան, 2012:

31. Սարուխանյան Բ. Ո., Կապերի և կապական բառերի ուսուցումը միջնակարգ դպրոցում, Երևան, 1977:

32. Սարուխանյան Ս., Միրումյան Մ., Դիշաղաջյան Ն., Փուլային ուսուցման եղանակ (Ավագ դպրոց), Երևան, 2014:

33. Ուսուցման բովանդակության և մեթոդների կատարելագործման հարցեր, Միջբուհական գիտաժողովի նյութերի ժողովածու, Վանաձոր, 1997:

34. Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, Վանաձոր, 2008:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ	3
ՄԱՍ 1. ԽՈՍՔԻ ՄԱՍԱՅԻՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐՆ ՈՒ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐՆ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ	5
ՄԱՍ 2. ԽՈՍՔԻ ՄԱՍԱՅԻՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՍԱԳՐՔԵՐՈՒՄ	15
2. 1. Խոսքի մասային տեղաշարժերի և փոխանցումների քննությունը բուհական դասագրքերում	15
2. 2. Խոսքի մասային տեղաշարժերի և փոխանցումների վերաբերյալ տեսական հարցերը դպրոցական դասագրքերում	22
ՄԱՍ 3. ԹԵՄԱՅԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ	30
3. 1. Թեմայի ուսուցումը բուհում	30
ԵՂԱՆԱԿ 1.	34
ԵՂԱՆԱԿ 2.	36
ԵՂԱՆԱԿ 3.	37
3. 2. Թեմայի ուսուցումը ժամանակակից դպրոցում	38
3. 2. 1. Դասանյութի պլանավորումը, կառուցվածքը և ուսուցման եղանակները	41
3. 2. 2. Ուսուցման տարբերակներ	52
ՏԱՐԲԵՐԱԿ 1.	52
ՏԱՐԲԵՐԱԿ 2.	57
ՏԱՐԲԵՐԱԿ 3.	61
Հանձնարարվող գրականություն	64

ՁԱՐԻԿ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ԽՈՍՔԻՄԱՍԱՅԻՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐՆ

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

(ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ)

Տպագրված է «Տիգրան Մեծ» տպարանում